



Rédaction et Administration :
7, Rue Papèze — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ. Տարի - ՍԵՊՏԵՄԲԵՐ 1937 13^{me} Année - Septembre 1937

Խմբագրական

Մեր ժողովները

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Տրանսլեյտ Հոգին

Զեռնագրութեան քարոզ

Յիսուսի խաչին տակ

Վեր. Ժ. Կ. Պարսումեան
Թարգ. Յար. Խ. Տոմպալեան

Կենաց ածուկներէն

Կը բաւէ

Գ. Զաքարեան

Սերտողութիւն

Յիսուս Քրիստոս եւ ուխտերը

Երջանիկ յոյսը

Խնչ որ ռաբբիները կը խորհին

Պատմական

Մեծ դէմքեր ու դէպքեր...

Գ. Գ. Խաչիկեան

Ընտանեկան

Քրիստոնեային վկայութիւնը եկեղեցին մէջ

Պատանեաց

Տղու մը աղօթքը

Յ. Բ.

Զանազան լուրեր

Յիսուսի սէրը

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաները մէկու ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չիկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի Յշմարտութիւնն
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաները երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողբէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ մէկ հայերէնին Թարգմանութիւնը ալ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

ԹՈՒԻՔԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒԻՔԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման Տոլ. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօժ կրնայ զրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ զրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Մանտայով դրամական աւտօքումի առթիւ Հաճեցէ՞ք մոտաւորին վրայ չմոռնալ գրեւոր
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

Արձնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն.
բէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. ե. 14

ԲԱՆՔԵՐ



Ուրեմն ա՛լ վարնանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մամուլու խոստովանութեն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԳ. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1937

ԹԻԻ 9



ՄԵՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Սմէն օր միաբանութեամբ տաճարը երթալու ետեւէ էին

Գործ. Բ. 46

«Բանբեր»ի անցեալ թիւին մէջ ջանացինք լուսարանել թէ մէկտեղ ժողովուրդը թողելու չենք: Այդ առթիւ կարճառօտ ներկայացուցինք թէ քանի մը կարեւոր արժէքներ կորսնցնելու վտանգին մէջ կ'իյնանք, եթէ մէկտեղ ժողովուրդը թողունք:

Այս անգամ նկատի պիտի առնենք մեր ժողովները (քարոզաժողով, աղօթաժողով, յարաբերական ժողով, հոգեւոր խնճոյքներ) անոնց նպատակը, ու նաեւ մեր բռնելիք դիրքը այդ ժողովներուն մէջ:

Մեր ժողովները.—

Հոգեւոր պաշտամունքը մարդկային պատմութեան չափ հին է: Կայէնի եւ Աբելի երախտագիտական զոհաբերութիւնը անպայման առաջին պաշտամունքը չէր իրենց կեանքին մէջ:

Քարոզն ալ իր կարգին իր արմատները շատ հեռունները կը տարածէ: Անոր սկիզբը կը գտնենք հոն՝ ուր մեզքը արդէն աշխարհը խմորել սկսած էր: Սէթի ժամանակները (Ծնդ. Դ. 26) արդէն սկսուեցաւ Տէրոջը անունը կանչել, ուրիշ թարգմանութեամբ Տէրոջը անունովը կանչել: Լուտեր «կանչել» բառին տեղը կը գործածէ «քարոզել» և ինձ կուգայ թէ այդ բառը ամենայաջող թարգմանութիւնն է բնագրին եւ տրամաբանական:

Այն ատեն արդէն որոշ բաժանում կար մարդոց որդիներուն եւ Աստուծոյ որդիներուն միջեւ: Երկու տարբեր ընտանիքներու վերաբերող ուղղութիւններ հետզհետէ կը հեռանային իրարմէ: Ու Աստուծոյ որդիներուն նախաձօր մէջ կը գտնենք առաջին քարոզիչը, միախոսարը որ Աստուծոյ կամքը յայտնել կը ջանար Կայէնի ցեղին:

Այս քարոզութեան գործը անպայման շարունակուեցաւ մինչեւ Նոյ, մեծ արդարութեան քարոզիչը:

Արրահամ ալ ուր որ կ'երթար, սեղան մը շինելով Տէրոջը անունը կը կանչէր (իմա կը քարոզէր Ծնդ. ԺԲ. 8, ԺԳ. 4 եւն):

Քարոզը, բացօթեայ կամ տան մէջ, ուղղուած անհատի կամ ժողովուրդներու, շարունակուեցաւ Հին Կտակարանին մէջ Աստուծոյ սուրբ մարդոց եւ մարգարէներուն ձեռքով, մինչեւ Յովհաննէս Մկրտիչ, որ Այէնօնի մէջ Աստուծոյ թագաւորութեան յարմար ժողովուրդ մը պատրաստելու համար կը քարոզէր:

Քարոզել ըսել է, ազդարարելու կամ աւետիս տալու համար ձայն բարձրացնել, մունետիկ կանչել, աղաղակել: Սէթ, Նոյ, Արրահամ, մարգարէները եւ բոլոր Աստուծոյ մարդիկը մունետիկներ էին, եւ ազդարարութեան ձայն կը բարձրացնէին մեղաւոր մարդկութեան ցոյց տալու թէ, եթէ անոնք շարունակէին իրենց չար ճամբաներուն մէջ, Եհովա Աստուծոյն անհեղ ու անդաճնալի արդար դատաստանին պիտի ենթարկուէին: Ցոյց կուտային նաեւ Աստուծոյ դառնալու ճամբան ու Աստուածահաճոյ կիսնք մը վարելու կերպերը. «Բեզի յայտնեց ով մարդ, թէ ինչ է աղէկը, ու Տէրը քեզմէ ինչ կը պահանջէ, բայց միայն իրաւունք ըսել, որդիութիւն սիրել ու խոնարհութիւնով քու Աստուծոյդ հետ քալել»:

Քարոզութիւնը աւելի եւս համաշխարհային և աւետաբեր գոյն մը առաւ Նոր Կտակարանին մէջ:

Քարոզել աւետարանել է, ինչպէս կը տեսնենք Պետրոսի Պենտեկոստէի քարոզին մէջ, Պո-

ղոսի քարոզներուն մէջ, Աթէնքի Երուսաղէմի Ագրիպպայի առջեւ եւայլն: Մեր Տէրոջը լեւրան վրայի քարոզին մէջ կը տեսնենք Աստուծոյ Թագաւորութեան սկզբունքները եւ անոնց շատագոյնութիւնը իրենց ամենանուրբ գեղեցկութեամբ պարզուած: Փիլիպպոսի քարոզին մէջ (Գործ. Ը. 35) ինչպէս նաեւ Ակիւղասի եւ Պրիսկիղ սյի քարոզը (Գործ. ԻԸ. 16) լուսաբանական, մեկնաբանական եւ ուսումնասիրական են: Քարոզութիւնը այսպէս քրիստոնէական գործունէութեան ամենակարեւոր երակներէն մին կը ներկայացնէ: (Կարգա Հոգւ. Ժ. 14, 15):

Աւանդ նպատակը.—

Նուազ կարեւորութիւն չունին միւս ժողովները՝ աղօթաժողով, Ս. Գրական ուսումնասիրութիւն, հաց կտրելու եւ յարաբերական ժողովները, որոնք կը ծառայեն հաւատացեալներուն անձնական հոգեւոր կեանքի յառաջդիմութեան, սրբութեան, Քրիստոսը ճանչնալու ու նաեւ Աստուծոյ ընտանիքին հետ մտերիմ յարաբերութեան մտնելու եւ նաեւ սորվելու թէ ինչպէս քաղելու են Աստուծոյ առջեւ ու իր եկեղեցիին մէջ:

Վերջացնելու համար մեր խօսքերը մեր ժողովներու մասին, եզրակացնենք Պողոսի հետ թէ մեր ժողովներու նպատակն է ազգարարել Աստուծոյ արդար դատաստանը աշխարհի հանդէպ իր բռնած դիրքին հակառակութեան ոգիին համար, նոյնպէս հնչեցնել փրկութեան քաղցր աւետարանի ձայնը, մարդիկը փրկութեան առաջ նորդել, Քրիստոսի խաչին առջեւ խոնարհեցնել, քրիստոնէական վարդապետութիւնը սորվեցնել, Աստուծոյ սրբութեան նպատակը մարդուն հասկըցնել եւ զայն կատարեալ կեցնել Քրիստոս Յիսուսով: Քրիստոնէական ամէն հաւաքոյթի մէջ Քրիստոս է մեր մէջ փառաց յոյսը: Ուրեմն ինքն է կեդրոնը, շրջանակը մեր վկայութեանց, մեր խորհուրդներուն, գործունէութեան, մեր կեանքին:

Մեր դիրքը.—

Ուրեմն ճանչնալով քրիստոնէական ճաւաքոյթներն ու անոնց նպատակը, կ'արժէ անդրադառնալ մեր դիրքին վրայ հոգեւոր ժողովներուն մէջ: Ժողովին նիւթը յաճախ անձանօթ կ'ըլլայ մեզի. հոն քարոզողն է որ գործօն դերը իր ձեռքն ունի: Իսկ ունկնդիրները որոնք երկու դասակարգի կը բաժնուին, անապաշխարներ եւ հաւատացեալներ՝ ունին իրենց յատուկ պարտականութիւն մը, որպէսզի այդ հաւաքոյթը իր լման օգտակարութիւնը ունենայ եւ նպատակին ծառայէ:

Քարոզը բանախօսութիւն մը չէ վիճելի կամ գիտական նիւթերու վրայ: Անիկա կեանքի ա-

մենալուրջ կէտերու վրայ Աստուծոյ կամքին յատնութիւնն է: Ուրեմն անապաշխարը զալուէ հոն առանց նախապաշարումի կամ անտրամադիր: Ինքը պէտք ունի լսելու, սորվելու, ուրիշ գալու է մտիկ ընելու: Խիստ օրինակելի անձ մը ունինք Գործ. ԺԶ. 14ի մէջ: Լիդիա է այս անձը, աստուածավախ կին մը, բայց պէտք ունի անապաշխարութեան եւ փրկութեան: Եկած է հոն, ուր Պողոս կը քարոզէ եւ մտիկ կ'ընէ: Աստուած ալ անոր սիրտը կը բանայ Պողոսի ըսածներուն ուշադրութիւն ընելու: Այս բառին մէջ պարփակուած են երեք կարեւոր կէտեր՝ մտիկ ընել, հասկնալ եւ հնազանդիլ (հաւատալ եւ հաւատոյ քայլեր առնել Կ. 15): Ո՛վ անապաշխար, կ'արժէ որ Լիդիան քեզի օրինակ առնես: Եթէ քու տրամադրութիւններդ ալ նոյնն են, Տէրը շուտով քու սիրտդ ալ պիտի բանայ եւ պիտի փրկուիս. քու ներքին դիրքէդ կախում ունի քու փրկութիւնդ:

Իսկ հաւատացեալ մը հիւր չէ հոգեւոր հաւաքոյթի մը մէջ: Անիկա կուգայ որպէս գործակից քարոզողին եւ Քրիստոսի մեծ փաստին: Ինքը գիտէ թէ մեծ պայքար մը կայ որուն մէջ գործօն դեր ունի, այդ պատճառաւ Հոգին բոլոր գէնքերովը եւ Աստուծոյ սպառազինութիւնովը զինուած է: Քարոզաժողովի մը մէջ Աստուծոյ սուրը միշտ իր ձեռքն ունի, կը հետեւի քարոզին, կ'ուրախանայ, կ'աղօթէ քարոզողին համար (արդէն ամբողջ շաբաթ մը աղօթած է այդ ժամուն համար), կ'երգէ: Ժողովէն յետոյ կը փնտռէ անապաշխարներ, փափկութեամբ եւ Ս. Հոգիով կը շարունակէ նոյն նիւթի մասին վերջին գամերը զարնելու եւ հաստատելու զայն անոնց մտքին մէջ: Աստուծոյ զաւակները այս կէտին մէջ շատ սորվելիք ունին, պէտք է այդ ժամը եւ ժամուան յաջորդող վայրկեանները շատ աղօթքով եւ իմաստութեամբ գործածեն: Տէրը օգնէ մեզմէ ամէն մէկուն:

Ինչ որ կը վերաբերի միւս հոգեւոր հաւաքոյթներուն, Աստուծոյ զինուորեալ մը գիտէ իր պաշտօնը: Անոր համար զինազաւար եւ վազանձ չկայ. անիկա միշտ իր դիրքին վրայ է, արթուն է ճանչնալու վայրկեանը, որուն մէջ իրեն կուգայ պարտականութիւնը եւ երբ պարտականութեան վայրկեանը կը հնչէ, նա պատրաստ է իր գէնքը գործածելու ամենայն դէպքով, ազգու կերպով:

Հոգեւոր հաւաքոյթները չեն կրնար ճապաղալ երբ այս ներդաշնակ գործակցութիւնը կայ: Կ'արժէ որ ուշադրութեան առնենք Ա. Կոր. ԺԲ. և

(Ճար. տես 143րդ էջը)



ՏՐՏՆՁԵԼՈՒ ՀՈԳԻՆ

(Փիլ. Բ. 14-16)

«Ամէն բան առանց տրտունջներու ու վիճաբանութիւններու ըրէք»: Առաքեալը հոս իր մատը կը դնէ մեր քրիստոնէական ծառայութիւնը յաճախ ապականող ու աւերող երկու՝ բնաւորութիւններուն վրայ՝ տրտունջի հոգիին, որ մեր աշխատանքին ամբողջ անուշութիւնը կը կողոպտէ ու վէճի հոգիին, որ մեր զործունէութեան սրբազան զօրութիւնը կը յափշտակէ: Փրկութեան զործին կը ձեռնարկենք, սակայն մեր ձեռնարկին սիրտը արդէն կոտորած ու սառած է քանդի տրտունջներով կ'սկսինք: Անոր անիւները ու քարտէսի իւղովը իւղուած չըլլալով՝ փոխանակ սահուն կերպով ընթանալով՝ դժուարաւ կը շարժին դժկամակութեան աւազուտ գետինն վերայ: Երկու քայլ դէպի յառաջ երթալու միջոցին քայլ մը ետ կ'երթանք ու մեր ընթացքը մերթ ընդ մերթ կը կասի՝ փոխանակ փառաւոր ու անդիմադրելի խաչակրութեան մը նման յառաջանալու: Հետզհետէ աւելի ու աւելի կը համոզուիմ թէ մեր ծառայութեան մէջ երեւցած դժկամակութիւնը յառաջ կուգայ մեր ազօթքներուն մէջ գտնուած փառաբանութեան պակասէն: Մարդիկ տրտմութեամբ կը կատարեն իրենց պարտականութիւնը, որովհետեւ պէտք եղածին չափ չեն երգեր իրենց Տէրոջը ներկայութեան: Գործունէութեան ընթացքին ի յայտ եկած գանգատը ազօթքի միջոցին երեւցած տրտունջի մը ծնունդն է: Աստուծոյ առջեւ կը ներկայանանք տրտունջներով ու կատաղի կոհակներու նման մեր վրայ յարձակող կարօտութիւններուն տխուր պատմութիւններով. չենք ներկայանար փառաբանութեամբ ու մեզի եղած բարերարութիւնները կրկին կրկին յիշելով: Շատեր կ'ազդադակեն «Աստուած ոգորմէ», որոնք երբեք չեն բացազանչեր «Փառք Աստուծոյ»: Անոր ոգորմութեանց շատութիւնովը չէ որ կ'ելլենք Տէրոջը առջեւ ալ մեր տրտունջներուն շատութեամբ: Մեր բերնին տկար երգը գրեթէ կը խեղդուի մեր ազմկալի ողբերգութեան տակ: Եթէ

փառաբանութեան քայլերգով աշխատութեան դաշտն ելլել կ'ուզենք, բարեփոխութիւնը Տէրոջը առջեւ սկսելու է: Անոր ներկայանալու և մեծ զգուշութեամբ մեր ընդունած օրհնութիւնները թուելու ենք: Առանց աճապարանքի պատմելու ենք մեր պատմութիւնը, որպէսզի մեր հոգիներուն վրայ դրօշմուի: Կրկին ու կրկին պատմելու ենք մինչեւ որ մեր սիրտերը բոցավառուին ու մեզ ճշող ծանրութեան հոգին փառաբանութեան վերարկուի մը վերածուի: Երբ մեր ազօթքները փառաբանութեան ջերմութիւնը ըստանան, ծառայելու նորածին եռանդով մը կը հրավառինք: Երբոր մեր շրթունքները Աստուծոյ ոգորմութիւնները խոստովանելու սկսին, մեր ոտքերը կը վազեն Անոր պատուիրանքները կատարելու: Ամէն բան առանց տրտունջներու կ'ընենք:

Առաքեալը հոս կը մատնանշէ երկրորդ տարածադրութիւն մըն ալ որ յաճախ քրիստոնէական ծառայութեան ազդեցութիւնը կ'աւրէ, վիճաբանութեան հոգին: Կան արդիկ որ կարծես թէ առանց կոշիւ բան մը չեն կրնար ընել: Ամէն բանի համար կը հակաճառեն: Ամէն բանի մէջ հակառակ կողմը կը բռնեն: Կը սիրեն վիճաբանիլ: Այնչափ ոյժ կը վատեն միջանկեալ խնդիրներու շուրջ որ շատ քիչ կամ երբեք ոյժ չմնար էական հարցերու համար: Երբ իրական պատերազմը կ'սկսի, անոնց ուժերը արդէն ըսպառած կ'ըլլան: Ինչ որ անհատներու մասին կ'ըսենք, կրնանք ըսել նաեւ ընդհանուր եկեղեցական կեանքին նկատմամբ: Այլեւայլ յարանուանութիւններու ոյժը կը վասնուի ջնջին վիճաբանութիւններով եւ ունայն հակաճառութեամբ, մինչ Աստուծոյ խաղաղութեան իրական զործը կ'անտեսուի ու կը տկարանայ: Կը կոտինք դրօշակի մը համար, կամ նոյնիսկ մեր համագեղատներուն ձեռին ու գոյնին վրայ ու պատերազմադաշտի ալլեւայլ զօրագունդերուն առաջնութեան շուրջ՝ մինչ թշնամին խրոխտաբար իր ուժերը հաւաքելով էմանուէլ թաղաւորին երկիրն ու պաշտօնը կը յափշտակէ: Միայն մէկ ճամբայ գիտեմ որով կարելի է այս անսուրբ վէճը կասեցնել ու դադրեցնել ուժի սպառումը: Այդ ճամբան է աւելի սերտ ու աւելի փառաբանութեամբ լեցուն կեանք մը Աստուծոյ հետ: Եթէ իւրաքանչիւր յարանուանութիւն աւելի ոգեւորուէր Աստուծոյ բարութեամբն ու ոգորմութեամբը, վիճաբանութիւններուն մեծ մասը կ'անհետանար փոքրիկ ամպերու նման որ կ'անյայտանան առաւօտեան արշալոյսին: Ամենէն դառնօրէն վի-

ճարանողները անոնք են որ ներքին անդորրութենէ եւ ուրախութենէ զրկուած՝ տրտունջներու փոթորկոտ եւ ամպոտ մթնոլորտի մը մէջ կը շարժին: Երբոր անհատներ զաղարին զանգատելէ՝ վիճաբանութիւնները կը հեռանան եկեղեցիէն:

«Որպէսզի ըլլաք անքիժ ու անարատ»: Ահա առանց տրտունջի եւ վիճաբանութեան ծառայող անհատի մը նկարագիրը: Անոր նկարագրին ամենէն թագուն մասերը գտնուած կ'ըլլան ամէն ստորին բաղադրութենէ ու խառնուրդէ: Անքիժ: Հեռի գաղտնի ու զինքը արատաւորելու հակամէտ տկարութիւններէ: Մեր սիրտերը կը յուզուին երբ կը նկատենք թէ որքան հեռու ենք այս կենարար վիճակէն: Խիստ շատ վատ բաղադրութիւններ կը գտնուին մեր անձերուն մէջ: Այնչափ դիւրագրգռութիւն, այնքան ապօրինի համակերպութիւն: Գաղտնի հաճոյք մը կ'զգանք մեղանչելէ, ու մեղքը, այս ստորին տարրը, խիստ փոխանցիկ է ու իր գարշելի ազդեցութիւնը կը տարածէ մեզմէ շատ անդին: «Չար ընկերակցութիւնները բարի վարքը կ'ապականեն»: «Չէ՞ք զիտեր որ քիչ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ»: Մեր Տէրոջը շնորհալի նպատակն է որ մեր բարոյական ու հոգեկան կեանքը կազմող բոլոր տարրերը զուտ ու մաքուր ըլլան, հեռի ամէն ապականութենէ ու փտտութենէ եւ առողջ կենսունակութիւն ցոյացնեն ու փոխանցեն ուրիշներու: «Աստուծոյ որդիներ առանց մեղադրանքի, կամակոր ա խոտորեալ ազգին մէջ»: Այս ըլլալու է մեր ծառայութիւնը աշխարհի վերայ: Մեր կատարեալ կեանքը երեւան բերելու է աշխարհի հաշմանդամ ու խոտորեալ կեանքը: Մէկի մը ծուռ վիճակը իրեն հասկցնելու միակ ճամբան՝ անոր առջեւ շիտակ կեանք մը ապրիլն է, ու կամակոր անհատ մը միմիայն ճշմարտապէս զարձի եկած մէկի մը կեանքին տարածած լոյսին մէջ կրնայ տեսնել իր կամակորութիւնը: Որչափ որ կ'ուզենք կրնանք խօսիլ սեւութեան մասին: Անոր վրայ խօսելով չենք կրնար երեւան բերել անոր նկարագիրը: Բանի մը սեւ ըլլալը ցուցնելու միակ միջոցը զայն ճերմակ տոարկայի մը քովը դնելն է: Բրիտանականներուն գործն է ճերմակ երեւնալ, զուտ ոսկին ներկայացնել, որպէսզի ամէն մեղք անոնց դէմ խիստ մեղանչական երեւնայ ու ամէն ծուռութիւն երեւան գայ անոնց կատարեալ անկեղծութեան առջեւ: «Որոնց մէջ դուք լուսաւորներու պէս կը փայլիք, աշխարհի մէջ, կենաց խօսքը ամուր բռնելով»: Սակայն մեր ծառայութիւնը աշխարհի վրայ

միմիայն անոր թերութիւններն ու արատները երեւան բերել չէ, այլ նաեւ «կենաց խօսքը հռչակել, որպէսզի աշխարհ անով յուսադրուելով անոր միջոցով կատարելութեան հասնելու կարելիութիւնը տեսնէ: Մոլորեալները փնտռելու համար միայն հոս հոն լոյս մը արձակելու չենք, այլ անձնապէս փայլելու ենք անոնց առջեւ որ անոնք մեր բարի գործերը տեսնեն ու փառաւորեն մեր Հայրը որ երկինքն է: Մեր ծառայութիւնը ոչ թէ միայն մարդոց մեղքերը երեւան բերելու, այլ նաեւ զանոնք փրկելու է: Անհրաժեշտ է որ մարդոց ցուցնենք իրենց ցնցոտիները, սակայն անոնց յուսահատ աչքերուն առջեւ բռնելու ենք նաեւ «արդարութեան պատմութեան» ու «փրկութեան զգեստը»: Ոչ թէ միայն լոյսի, այլ նաեւ կեանքի առաքեալներ ենք մենք: Այս մեծ ծառայութեան կանչուած Պօղոս առաքեալի այս յստակ փողովը սրով մեղի կ'ոչ կ'ընէ:

«Ինծի պարծանք ըլլալու համար Քրիստոսի օրը, թէ պարապ տեղ չբաւեցի»: Փիլիպպեցոց շնորհալի ծառայութիւնը լուսաշող թագ մը պիտի ըլլայ Առաքեալին զխոուն: Երբ աշակերտները արգիւնաւոր խաղաղութեան մը կը հասնին, անոնց ուսուցիչը իրեն հանգիստը կը մտնէ ու անոնց փրկութեան մէջ կը գտնէ իր վարձատրութիւնը:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՋ

(Խօսուած վեր. Ժ. Կ. Պարսումեանի կողմէ վեր.

Ձ. Պուտաքեանի ձեռնադրութեան առթիւ)

Այս առթիւ կը փափաքեմ Տէրոջը շնորհքով քանի մը խօսք խօսիլ: Ասոր համար կ'ուզեմ ձեր ուշադրութիւնը զարձնել Ա. Պետ. Ե. 4-4 համարներուն (Մէնկէի թարգմանութեան հետեւելով):

Համար 2ին առաջին մասը երէցի մը պաշտօնին եւ գործին ինչ ըլլալը կը ցուցնէ:

Համար 2ին վերջին մասը եւ 3րդ համարը կը յայտնեն թէ երէցը իր գործը կամ պարտականութիւնը ինչպէս կատարելու է:

Համար 4ին մէջ անոր վարձքին ինչ ըլլալը կը տեսնենք:

Ամէն բանէ առաջ ասիկա յորդոր մըն է որ առաքեալը իր երէց եղբայրներուն կ'ուզէ: Արդեօք այս յորդորը նուա՞զ կարեւոր է ներկայ նիւթապաշտ եւ անհաւատ դարու եւ խոտորած ազգի երէցներուն համար: Ո՛չ երբեք: Ընդհակա-

ռակը ա՛լ աւելի կարեւոր է, քանզի մենք վերջին օրերու մէջ է որ կը գտնուինք, Յիսուսի գալուստը կը մօտենայ եւ Սատանային խաբէութիւնը ու յարձակումը ալ աւելի կը շատնայ ու պիտի շատնայ:

Եթէ այս թուղթին որո՞նց եւ ի՞նչ պարագաներու տակ գրուած ըլլալը միտքերնիս բերենք, պիտի տեսնենք թէ այս յորդորը մեզի հայերուս սրտին աւելի մօտէն եւ աւելի շեշտով մը կը խօսի: Ա. գլուխ 1 համարէն կը հասկնանք թէ այս թուղթը ուղղուած է օտարականներուն որ ցրուած էին Պոնտոսի, Գաղատիայի եւն. գաւառներուն մէջ: Նաեւ գլ. Դ. 12, 13 համարներէն կը հասկնանք թէ անոնք նեղութեան մէջ էին եւ կը չարչարուէին:

25-՝ որ մենք եւս այլեւայլ երկիրներու մէջ ցրուած օտարականներ եւ չարչարուող ժողովուրդ մը եւ անոր երէցներն ենք: Այս տեսակէտէն կը խորհիմ թէ եթէ առաքեալը այս օր գրելու ըլլար, պիտի ըսէր օտարականներու որ ցրուած էք Սուրիայի, Յունաստանի, Պուկարիոյ, Եգիպտոսի եւ Ֆրանսայի եւն.ի մէջ: Կամ աւելի մասնաւորելով պիտի ըսէր՝ Պուշ տիւ Ռօնի, Արտէշի, Տրօմի, Իզէրի, Ռօնի եւ Սէնի մէջ: Ուստի այս տեսակէտէն դիտելով պէտք է որ մենք հայ երէցներս այս իրիկուն առաքեալին այս յորդորին աւելի ուշադրութիւն տանք:

Ի՞նչ է երէցին պաշտօնը եւ զործը կամ պարտականութիւնը:

Համար երկուքին առաջին մասը «Աստուծոյ հօտը որ ձեզի վստահուած է, արածեցէք եւ անոր վերականգնութիւն ըրէք: Համարին առաջին» մասը երէցին պաշտօնին ինչ ըլլալը կը ցուցնէ: Կը տեսնենք թէ երէցին հօտ մը վստահուած է, յանձնուած է, ուրեմն երէցը հովիւ մըն է, հոգեւոր հովիւ մը եւ անոր պաշտօնը հոգեւոր հովութիւն:

Այս հօտը Աստուծոյ հօտն է: Ոչ թէ մերը, ոչ թէ հասարակ մարդու մը կամ իշխանի մը, հապա Աստուծոյ, ամենագէտ եւ ամենակարող Աստուծոյ:

Նաեւ այս հօտը թանկարժէք հօտ մըն է, ինչու որ Աստուած անիկա իր արիւնովը ծախու առած է:

Աստուած իր այս հօտը, թանկագին հօտը ոչ թէ հրեշտակներուն, երկնաւոր զօրքերուն վստահած կամ յանձնած է, հապա մարդոց: Բայց ոչ թէ աշխարհի մարդոց, հապա այն մարդոց որ թէպէտ աշխարհի մէջն են, բայց ոչ թէ աշխարհէ, իրեն ճշմարիտ աշակերտներուն, ծառանե-

րուն, երէցներուն: Աստուած անձնավստահ մարդոց իր հօտը չկրնար յանձնել: Տէրը իր հօտը Պետրոսին այն ատեն միայն վստահեցաւ ու յանձնեց, երբ Պետրոս խոնարհեցաւ եւ իր անձնավստահութենէն հրաժարելով ընդունաւ իր յոյսը ու վստահութիւնը Տէրոջը վրայ դրաւ:

Աստուած երէցէն, հովիւէն ամէն բանէ առաջ կը պահանջէ որ անձնավստահ չըլլայ, հապա Աստուծոյ վստահի, իր վստահութիւնը միայն ու միայն Աստուծոյ վրայ դնէ: Միւս կողմէ հովիւը իր պաշտօնին լրջութեանը եւ պատասխանատուութեան որքան ծանրակշիռ ըլլալը տեսնելով պէտք է որ յուսահատի, հապա պիտնալով թէ հակառակ իր անարժանութեանը՝ Տէրը իր հօտը իրեն վստահած է, ուրեմն ինք ալ Աստուծոյ վստահելով պէտք է քաջալերուի:

«Արածել», հօտը դուրս հանել և տանիլ դաշտ ուր նա ճարակի, այսինքն Աստուծոյ խօսքին քարոզութեանը մարգագետիններուն մէջ տանիլ ուր հօտը սնանի: «Արածեցէք» կամ «վերականգնութիւն ըրէք», ասոնք հովիւին գործին կամ պարտականութեանը ինչ ըլլալը կը ցուցնէ:

Հոս պէտք է մտաբերել թէ այս հօտը զուտ գաղութներու եւ կամ զուտ ոչխարներու հօտը չէ. հապա անոր մէջ չգաղութներ, նաեւ ոչխարներ կան: Նորածիններ եւ չափահասներ, տկարներ եւ զօրաւորներ, հիւանդներ եւ առողջներ, յետաճողներ եւ յառաջացածներ կան, ուստի պէտք է որ հովիւը անոնց ամէն մէկուն վիճակը եւ կարողութիւնը ճանչնայ եւ դանոնք իրենց պէտքին համաձայն կերակրէ եւ սնուցանէ, անոնց ժամանակին իրենց կերակուրը տայ: Ասոր համար պէտք է անոնց մօտենայ, անոնց հետ մտերմանայ, անոնց ամէն մէկուն վիճակը եւ տարողութիւնը հասկնայ եւ հապա շատ խոհեմութիւնով եւ զգուշութիւնով անոնց օգտակար եւ անհրաժեշտ ճարակը կերցնէ:

Բ. «վերականգնութիւն ընել», այսինքն «առաջնորդել», «կառավարել» եւ «հսկել»:

«Առաջնորդել» հօտը, գաղութները եւ ոչխարները հոն՝ ուր է ճշմարիտ արօտը: Որքան կեղծ արօտներ ալ կան, ուրեմն հօտը առաջնորդել պէտք է: Հովիւը պէտք է առաջնորդէ հօտը ոչ թէ իրեն, ոչ թէ այս կամ այն եկեղեցիին կամ այսինչ կամ այնինչ վարդապետութեան, հապա ճշմարիտ արօտին — Աստուծոյ խօսքին որ ճշմարտութիւն է եւ ճշմարտութեան եւ կենաց աղբիւր: Քանզի ինք է «ճշմարտութիւնը եւ կենսաբան»:

«Կառավարել» հօտը որպէսզի միութիւնը պահպանուի: Գաղութները գաղութներու հետ, ոչ-

խարները ոչխարներու հետ եւ ամէնը մէկտեղ միաբան պահել որ իմաստութիւն, կարգապահութիւն, սէր եւ համբերութիւն կը պահանջէ:

«Հսկել» ամբողջ հօտին վրայ, ամէն մէկ գառնուկը եւ ոչխարը ուշադրութեան առարկայ ընել, փտանդի ժամանակ դանոնք պաշտպանել եւ եթէ հարկ ըլլայ քու կեանքդ փտանդի գնել: Ասոնք հովիւէն միշտ արթուն ըլլալ եւ մեծ անձնութեան կը պահանջեն:

Ներկայիս որքան սխալ վարդապետութիւններ եւ փտանդաւոր ու կործանարար շարժումներ ու հոսանքներ կան: Պէտք է որ հովիւը ինք անձամբ զոգուանայ անոնցմէ, նաեւ զգուշացնէ իր հօտը: Ինչպէս դուրսը յափշտակող գայլեր կան, նոյնպէս երբեմն ներսը ոչխարի մորթով գայլեր կը գտնուին, պէտք է զանոնք ճանչնալ եւ հօտը պաշտպանել:

Հօտին մէջ ինքնահաւան եւ կամակոր ոչխարներ ալ կը գտնուին որ փտանդի մէջ են եւ ուրիշներն ալ կը փտանդեն: Պէտք է անոնց վրտանդը ցուցնել, զգուշացնել եւ խոնարհեցնել: Տկարները պէտք է ուժով ցնել, հիւանդները բժշկել եւ կոտորածները փաթթել:

Ասկէ գատ ամպի ու մարախուղի օրը ցըրւած գառնուկներ ու ոչխարներ ալ կան: պէտք է զանոնք ժողվել: Մոլորած ու կորսուած ոչխարներ կան, պէտք է փնտռել եւ դարձնել: Այսօր մեր ժողովուրդին մէջ որքան շատ ոչխարներ կան որ ամպի ու մարախուղի օրը ցըրւած են, պէտք է զանոնք ժողվել, որքաններ մոլորած եւ կորսուած են, պէտք է փնտռել եւ դարձնել:

Ահա հովիւին — երէցին կարգ մը պարտականութիւնները, ընելիքները, որոնց համար հօտին Տէրը հովիւներէն հաշիւ պիտի պահանջէ: Ո՛հ, ասոնք ինչպիսի մեծ պատասխանատուութիւն մը կը բեռնաւորեն հովիւին ուսին, նամանաւանդ սրտին վրայ:

Ասոնք մարդկային իմաստութիւնով, աստուածաբանական բարձրագոյն կրթութիւնով, ֆիզիքական զօրութիւնով եւ կամ միջոցներով կատարել երբեք կարելի չէ: «Զօրութիւնով չէ եւ ուժով չէ, հապա իմ Հոգիովս է» կ'ըսէ զօրաց Տէրը: Բարի հովիւին Հոգին եւ օգնականութիւնը եւ Սուրբ Հոգոյն իմաստութիւնը եւ զօրութիւնը պէտք են: Ուստի հովիւը իր ապիկարութիւնը եւ անբաւականութիւնը գիտնալով եւ խորապէս զգալով պէտք է միշտ բարի հովիւին դիմէ, Անոր գործակցութիւնը եւ օգնութիւնն ու շնորհքը խնդրելու, Անոր ստգերուն քով նստիլ, Անկէ սորվիլ եւ շնորհք ու պատգամ ընդունիլ:

2. Երէցը իր պարտականութիւնը ինչպէս կատարելու է:

ա. Ոչ թէ աւամայ, հապա կամաւ, Աստուծոյ կամքին համեմատ: Այս պաշտօնը եւ անոր պարտականութիւնը աւամայ ստանձնելիք եւ կատարելիք բան մը չէ երբեք: Հովիւը պէտք է որ Աստուծմէ կոչում ստացած ըլլալով իր գործը սիրայօժար կատարէ Աստուծոյ կամքին համեմատ:

բ. Ոչ թէ անարգ շահախնդրութեամբ, հապա ուրախութիւնով եւ սիրով, Ճշմարիտ հովիւ մը սիրելի հօտին համար իր պարտականութիւնը կը կատարէ ուրախութիւնով, ոչ թէ անարգ շահախնդրութեան համար, հապա Քրիստոսի սէրէն մղուած, «Ինչու որ Քրիստոսի սէրը մեզ կ'ստիպէ»:

գ. Ոչ թէ ժողովուրդներու վրայ տիրելով, հապա հօտին օրինակ ըլլալով: Բարի հովիւը սպասաւորութիւն ընդունելու չեկաւ, հապա ըսպասաւորութիւն ընելու: Գործաւորներէն ալ կը պահանջէ որ իր օրինակին հետեւին: Հովիւէն կ'ակնկալուի որ ամէն բանի մէջ հօտին օրինակ ըլլայ: Հովիւ մը իր կեանքովը հօտին որքան որ օրինակ կրնայ ըլլալ՝ այնքան օգտակար կրնայ ըլլալ: Յիսուս՝ Պետրոսի այս պաշտօնը յանձնելէ յետոյ անոր կ'ըսէ, «Եկուր իմ ետեւէս»: Հովիւը առաջնորդող ըլլալով մէկտեղ, իր կարգին բարի հովիւին հետեւող եւ Անոր օրինակին նմանող մը պէտք է ըլլայ:

Դ. Ի՞նչ է երէցին վարձքը:

Համար 4, «Այն ատեն երբոր Հովուապետը երեւնայ, փառաց անթառամ պսակը պիտի ընդունիք»:

«Այն ատեն», երբ երէցը իր պարտականութիւնները հաւատարմաբար կը կատարէ, երբոր Հովուապետը երեւնայ, փառաց պսակը պիտի առնէ: Հովիւին վարձքը իր ստացած թոշակը չէ, ոչ ալ մարդոց զովեստն ու զնահատութիւնները կամ քամահրանքն ու քննադատութիւնները, հապա փառաց անթառամ պսակը: Անոր վարձատրութիւնը Հովուապետէն է, այն ալ ոչ թէ հոս հապա իր ասպարէզի ընթացքը կատարելուն վախճանին:

Տէրը շնորհէ որ մենք հովիւներս մեր կոչումին հաւատարիմ ըլլանք եւ մեր վարձատրութիւնը Հովուապետէն սպասենք եւ ստանանք եւ ոչ թէ մարդոցմէ: Ճշմարիտ, հաւատարիմ երէցին վարձքը հիմա Աստուծոյ շնորհքով բարի Հովիւին առաջնորդած հոգիներն են, իսկ երբ Տէրը գայ, փառաց պսակը պիտի տայ անոր: Ժ.Կ.Պ.

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԻՆ ՏԱԿ



Յիսուսի խաչին տակ կը գտնեմ սուրբ
վայր մը կենսատու
լի երկնից ներկայութեամբ եւ աշխարհիկ
հոգէն հեռու:
— Օրհնեա՛լ խաղաղութիւն մը կ'ողողէ զիս:
Ի ծունր խաչին տակ երբ կը հանդէ՛ի հողիս:

Յիսուսի խաչին տակ կը ստանամ
օրհնութիւններ անբաւ,
չոն կ'ըմպեմ կենաց աղբիւրէն, մինչ
կ'անցնի հոգւոյս ծառաւ:
— Օրհնեալ խաղաղութիւն մը...

Յիսուսի խաչին տակ կը վայլեմ
նուիրական ժամեր
եւ կը ճաշակեմ երկնից ցնծումն եւ Հօր
Աստուծոյս սէր:
— Օրհնեալ խաղաղութիւն մը...

Յիսուսի խաչին տակ ծընրագիր կ'ուզեմ
մընալ յաւէտ
Փառք տալու օրհնեալ Գառին որ
հաշտեցուց զիս Հօրը հետ:
— Օրհնեալ խաղաղութիւն մը...

Յիսուսի խաչին տակ կ'ուսանիմ կըրել
իմ խաչս յօժար,
չոն կ'ելլեն սրտէս մարմնոյ հաճութենք
եւ բոլոր աշխարհ:
— Օրհնեալ խաղաղութիւն մը...

Անգլ. ԶԱՐ. Խ. ՏՈՄՊԱԼԵԱՆ



ԿԸ ԲԱՒԷ

Հողով սրտով շատ կը յուզուիմ,
վերջիջելով անցեալ կեանքն իմ,
Անձիս կ'ըսեմ ամօթահար՝
Ե՛րբ պիտ փակչիս քոյ Փրկչին յար,

Կը բաւէ:

Հա՛ւ մըտածէ քեզի համար,
Պիղծ մեղքերուդ եւ անհամար,
Զխընայո՞ղ Իր սուրբ Որդւոյն,
Արժանանալդ Հօրը սիրոյն,

Կը բաւէ:

Շատ տարիներ ասկից առաջ
Կը քաշէի սրտէս հառաչ.
Իղձս էր որ ոմն ինծի ըսէր,
Երբ ունենաս հաւատք եւ սէր՝

Կը բաւէ:

Եթէ մէկը տեսնել ցանկայր,
Որպէս տեսաւ Աբրահամ հայր,
Տեսնել զԱստուած՝ նա պիտ' ըսէր
Երբ ունենաս հաւատք եւ սէր

Կը բաւէ:

Հաւատալով Տէրոջ խօսքին,
Որ կը փրկէ մարդոց հոգին,
Կոտրած սրտով ես ալ դացի
Զայս ըսողին «Եկէք Ինծի»,

Կը բաւէ:

Դարեր առաջ օրհնագիր
Մարգարէին հարց եւ խնդիր
Տըւին մարդիկ փրկելու,
Նա՛ սաւ ըլլալ հեզ եւ հլու

Կը բաւէ:

Աստուած ձեզի ալ մարգարէ
Ոմն ձեր մէջէն պիտի հանէ,
Նաեւ անոնց ըսաւ Մովսէս
Սիրեցէք զԱյն Աստուծոյ պէս

Կը բաւէ:

Երբ Դաւիթին կը հարցընենք
Ի՞նչպէս կրնանք փրկուիլ մենք:
Շատ բաներ կան՝ պիտի ըսէ,
Բայց Դուն Տէրը հովիւդ ըրէ

Կը բաւէ:

Աղօթողին ի ծունր իջած
Ի տաճարին բազկատարած,
Պիտ' ըսէ քեզ նա քո հարցման՝
Դիմէ Ակին իմաստութեան

Կը բաւէ:

Մարգարէք ալ ամէն դարու
Տէրոջ խօսքով պատկառազրու,
Բարոյեցին մարդկանց «Եկէք,
Գինի ու կաթ ծախու առէք»

Կը բաւէ:

Ի պատասխան նրբին հարցման,
Որ ըրաւ ոմն օրինական,
Յիսուս ի՞նչ լաւ կը պատուիրէ,
Գնա՛ եւ դուն այդպէս ըրէ

Կը բաւէ:



Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝ SCOFFIELD Էն

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՈՒԹՅԵՐԸ

○○○○○○○○

5. Մովսիսական ուխտը (Ելից ԺԹ. 25).— Այս ուխտը տրուեցաւ Իսրայէլի և երեք բաժանումներ ունի: Այս բաժանումներէն իւրաքանչիւրը միւսներուն անհրաժեշտ էր, եւ երեքը միասնաբար կը կազմեն Մովսիսական ուխտը: ա. Պատուիրանքները (Ելից Ի. 1-26) ասոնք Աստուծոյ արդար կամքը կ'արտայայտէին: բ. Գատաւ տանները (Ելից ԻԱ. 1-ԻԴ. 11) ասոնք Իսրայէլի ընկերական կեանքը կը կառավարէին: գ. Կանոն. նախնականները (Ելից ԻԴ. 12-ԼԱ. 18) ասոնք Իսրայէլի կրօնական կեանքը կը կառավարէին: Այս երեք բաժանումները միասնաբար կը կոչուին Օրէնքը Նոր Կտակարանին մէջ գործածուած իմաստով (Մատթ. Ե. 17, 18): Պատուիրանքները «դատապարտութեան եւ մահուան պաշտօն» էին (Բ. Կոր. Գ. 7-9):

Մովսիսական ուխտին հանդէպ Քրիստոսի յարաբերութիւնը կարելի է այսպէս ամփոփել. ա. Քրիստոս օրէնքին տակ մտաւ (Գաղ. Դ. 4): բ. Օրէնքին կատարեալ հնազանդ տպրեցաւ (Յովհ. Ը. 46; Մատթ. ԺԷ. 5, Ա. Պետ. Բ. 24-23):

Յիսուս ըսաւ աւազակին,
Խոստանալով կեանք թանկագին,
Լի հաւատքով ի խոր սրտէ
Դուն որ ըսիր, «Տէր զիս յիշէ».

կը բաւէ:

Երկչոտ Պետրոս ի վերնատան,
Ձերթ առիւծ քաջ եւ անվարան,
Կ'ըսէ, «Թողէք ձեր մեղքեր սին,
Հաւատացէք Տէր Յիսուսին».

կը բաւէ:

Նոյնպէս Պօղոս՝ բանտապետին,
Շեղային հետ կէս գիշերին,
Ըսին «Տէրոջ հաւատաւ դուն,
Փրկելու դուն եւ քոյ տուն».

կը բաւէ:

Գ. ՋԱՔԱՐԵԱՆ

վ. Նա օրէնքին պաշտօնեայ մը եղաւ. հրեաներուն, մաքրելով զայն ռաբբունական իմաստակութիւններէն, շեշտելով անոր բոլոր անխղճալի խստութիւնը անոնց վրայ որոնք կը յաւակնին անոր հնազանդիլ (Ղուկ. Ժ. 25-37): Բայց այսու Նա Մովսիսական օրէնքին տակ նախահայրերուն եղած ուխտերը հաստատեց (Հոով. ԺԵ. 8): Վ. Նա իր սուրբ կեանքով եւ զոհաբերական մահով օրէնքին նախատիպերը կատարեց (Եբր. Թ. 11-26): Ե. Նա փոխադարձաբար օրէնքին անէծքը կրեց՝ որպէսզի Աբրահամեան ուխտը մատչելի (ստանալի) դառնար բոլոր անոնց որոնք կը հաւատան (Գաղ. Գ. 13, 14): գ. Նա իր քառութեամբ բոլոր հաւատացողները օրէնքի տակի գերութեանէն որդիներու դիրքին բերաւ (Գաղ. Դ. 1-7): է. Նա իր արիւնով միջնորդեց եւ վստահութեան ու շնորհքի նոր ուխտը բերաւ եւ բոլոր հաւատացեալները անոր մէջ կեցեր են (Հոով. Ե. 2, Եբր. Ը. 6-13): Այսպէսով Նա հաստատեց «Քրիստոսի օրէնքը» (Գաղ. Զ. 2) որուն պատուիրանքները թէեւ Մովսիսական օրէնքի պատուիրանքներէն աւելի մեծ ու բարձր են, բայց զանոնք կատարելը կարելի կը դառնայ Ս. Հոգիին միջոցաւ որ մեր ներսիդին կը բնակի:

6. Պաղեստինեան ուխտը (Բ. Օր. ԻԸ.-ԼԱ. 3).— Այս ուխտը կ'ապահովէ Իսրայէլի համար խոստացեալ Քանանու երկրին լման եւ տեւական ժառանգութեան խոստումին կատարումը, քանզի կարեւոր է նկատի առնել որ Իսրայէլ թէեւ կարճ ժամանակի մը համար Քանանու երկիրը ժառանգեց, բայց զեռ երբեք չէ եղած ժամանակ մը երբ Կրիստոս ազգը ամբողջութեամբ գրաւած ըլլաւ քանանու երկրին ամբողջութիւնը Աբրահամեան առանց պայմանի ուխտ-խոստումի տեսակէտով:

Այս ուխտին առաջին եւ կիսով կատարումը իր պայմանները ունէր, եւ եօթը մասերու կարելի է բաժնել. —

ա. Յրում անհնազանդութեան պատճառաւ (Բ. Օրին. ԻԸ. 63-68):

բ. Յրում վիճակի մէջ Իսրայէլի ապաղայ ապաշխարութիւնը (Բ. Օրին. Լ. 2):

գ. Տէր Յիսուսի երկրորդ գալուստը (Բ. Օրին. Լ. 3, Ամովս. Թ. 9-14, Գ. Առաք. ԺԵ. 14-17):

դ. Երկրին վերագրաւումը (Բ. Օրին. Լ. 5, Եսայ. ԺԱ. 11, 12, Երեմ. ԻԳ. 3-8, Եզեկ. ԼԷ. 24-25):

ե. Ազգովին ապաշխարութիւն (Բ. Օրին. Լ. 6, Հոով. ԺԱ. 26, 27, Ովս. Բ. 14-16):

զ. Իսրայէլը չարչարողներուն դատաստանը (Բ. Օր. Լ. 7, Ես. ԺԴ. 1, 2, Յովել Գ. 1-8, Մատ. ԻԵ. 31-46):

է. Ազգային բարգաւաճում (Բ. Օրին. Լ. 9, Ա. մովս թ. 14-14):

Քրիստոս հնազանդութեամբ իբր հրեայ մը ապրեցաւ երկրին մէջ Պաղեստինեան ուխտին ներքեւ եւ ինքն է որ դեռ պիտի կատարէ Քանանու երկրին վերաբերեալ Իսրայէլի տրուած բոլոր շնորհալի խոստումները (Բ. Օրին. ԻԼ.-Լ. 1-9):

7. Դաւիթեան ուխտը (Բ. Թագ. Է. 8-17). — Այս ուխտը՝ որուն վրայ «մարմնի կողմանէ Դաւիթի սերունդէն» եզոզ Քրիստոսի փառաւոր թագաւորութիւնը պիտի հաստատուի՝ կ'ապահովէ. —

ա. Դաւիթեան «տուն» մը, այսինքն սերունդ, ընտանիք:

բ. Փահ մը, այսինքն թագաւորական հեղինակութիւն:

գ. Թագաւորութիւն մը, այսինքն տիրապետութեան միջոցառում, շրջանակ մը:

դ. Յաւիտեան:

Եւ այս չորեքպատիկ օրհնութեամբ ուխտը միայն մէկ պայման ունէր: Սերունդին, ընտանիքին մէջ անհնազանդութիւնը պիտի պատժուէր, բայց ուխտը երբեք պիտի չխափանուէր (Բ. Թագ. Է. 15, Սաղ. 2թ. 20-37, Եսայ. ԻԴ. 5, ԾԴ. 3): Առաջին պատիժը եկաւ Ռոբոզամի օրով թագաւորութեան բաժնուելովը եւ վերջնական պատիժը գերութիւնով (Դ. Թագ. ԻԵ. 1-7): Այն օրէն ի վեր Դաւիթի ընտանիքէն միայն մէկ թագաւոր պսակուեցաւ Երուսաղէմի մէջ, եւ նա, այդ թագաւորը փուշերով պսակուեցաւ: Բայց թագաւորական ուխտը որ Ենովայի կողմէ Դաւիթի տրուեցաւ, եւ Գաբրիէլ հրեշտակի կողմէ նորոգուեցաւ, անփոփոխ եւ անսասան է (Սաղ. 2թ. 30-37) եւ Տէր Աստուած դեռ պիտի տայ այդ փուշերով պսակուած թագաւորին՝ «Իր հօրը Դաւիթի աթոռը» (Ղուկ. Ա. 31-33, Գ. Առաք. Բ. 29-32, ԺԵ. 14-17): Այդ, Քրիստոս է «Սերունդը», «Ժառանգը» եւ «Թագաւորը» Դաւիթեան ուխտի տակ (Մատթ. Ա. 1, Ղուկ. Ա. 31-33):

8. Նոր ուխտը (Եբր. Ը. 8). — Այս խօսքը կ'ամփոփուի, կը հիմնուի Յիսուսի այն խօսքին մէջ որ ըսաւ աւագ հինգշաբթի գիշեր Իր աշակերտներուն (առանց Յուդայի) գինիի գաւաթն ի ձեռին, «Ասիկա է Իմ արիւն» նոր ուխտի, որ շատերուն համար կը թափուի մեղքերու թողութեան համար (Մատթ. ԻԶ. 28):

Նոր ուխտը աւելի լաւ է քան Մովսիսական ուխտը, ոչ միայն բարոյապէս, այլ նաեւ գործնական ըլլալու գորութեամբ (Եբր. Է. 19, Հռով. Ը. 3, 4): Բ. Հաստատուած է աւելի լաւ (անպայմանադրական) խոստումներու վրայ: Մովսիսա-



ԻՆՉ ՈՐ ՌԱԲԲԻՆԵՐԸ ԿԸ ԽՈՐՀԻՆ

Ալեքսիոյ քաղաքներէն մէկին մէջ ռաբբի մը հետ տեսակցութիւն մը ունենալու համար սինակով գացի: Սրահներէն մէկին մէջ ռաբբի մը դասախօսութիւն կ'ընէր իր շուրջ բոլորած 15 ուսանողներու, որոնք իրենց ձեռքը ունէին Եբրայական Ս. Գիրքը: Քանի որ ռաբբին զբաղած էր, ժամը 4.30ին համար ժամադրութիւն տուաւ, եւ ալ աշակերտները բարեւելով մեկնեցայ:

..

Ժամը 4.30ին ռաբբին իր որդւոյն հետ (որ ապագայ ռաբբի մըն էր), ինծի կ'սպասէր:

Նախ Քրիստոսի վրայ իր ունեցած հաւատքին վրայ հարցում ըրի:

— Ձեր կրօնակիցներուն մէջ Քրիստոսի հաւատալու միտում մը չէ՞ք տեսներ: Ձեր մէջէն ոմանք վերջապէս Անոր մեսիաութիւնը ճանչնալու չե՞ն պար:

— Բնաւ. ոչ մէկ կերպով: Ոեւէ ատենէ աւելի մենք համոզուած ենք թէ Ասիկա Քրիստոսը չէ.

կան ուխտին մէջ Աստուած ըսաւ «Եթէ կատարէք...» (Ելից ԺԺ. 5), Նոր ուխտին մէջ նա կ'ըսէ «Ես պիտի ընեմ» (Եբր. Ը. 10, 12): Մովսիսական ուխտին մէջ հնազանդութեան դրդապատճառը վախն էր (Եբր. Բ. 2, ԺԲ. 25-27). Նոր ուխտին մէջ յօժար եւ կամեցող սիրտ մը ու միտք մը (Եբր. Ը. 10): Դ. Նոր ուխտին մէջ Տէրը ինքզինքը կը յայտնէ իւրաքանչիւր հաւատացեալի անհատապէս (Եբր. Ը. 11): Եւ Նոր ուխտին մէջ կայ մեղքերու կատարեալ մոռացում (Եբր. Ը. 12, Ժ. 17 բազմ. Ժ. 3): Գ. Նոր ուխտը կատարուած փրկութեան մը վրայ կը հանգչի (Մատթ. ԻԶ. 27, 28, Ա. Կոր. ԺԱ. 25, Եբր. Թ. 11, 12, 18-23): Է. Նոր ուխտը կ'ապահովէ Իսրայէլի ապագայ ապաշխարութիւնը եւ տեւական օրհնութիւնը (Եբր. ԼԱ. 31-40): Նոր ուխտը ութերորդ ուխտն է եւ այսպէսով կը խօսի յարութեան կատարելութեան վրայ:

«ԱՆՆՈՐԶԱՓ ԱԻԵԼԻ...» (Հռով. Ե. 9-24):

եւ մենք մեր կարելին կ'ընենք մարդիկը արգելելու: Ասկէ զատ, ըսաւ ան, այս առտու ուսումնասիրեցինք Եսայիի մարգարէութիւնները. «Անիկա հեթանոսներուն մէջ դատաստան պիտի տեսնէ եւ շատ ժողովուրդներ պիտի յանդիմանէ ու անոնք իրենց սուրբերը խոփեր, ու իրենց նիւզակները յօտոցներ պիտի շինեն. ազգ ազգի վերայ սուր պիտի չվերցնէ եւ ալ պատերազմ պիտի չստրվին»: Բայց ահա 19 դար է որ Քրիստոս եկած է եւ ի՞նչ կը տեսնենք: Ոչ միայն պատերազմը չէ դադրած, այլ քրիստոնեայ ժողովուրդները որ Անոր անունը կը կրեն, «մինչեւ իրենց ակոսները» զինուած են, պատրաստ զիրար ոչընչացնելու: Ո՛չ, Յիսուս մեսիան չէ:

— Յիսուս, պատասխանեցի, իր աւաջին գալուստով իրականացուց չարշարուող Մեսիայի մարգարէութիւնները: Անիկա քաւարար զոհը, մորթուող Գառնուկը եղաւ: Եսայ. ԾԳ.ի մարգարէութեան վիշտերու տէր եղող, մեր մեղքերուն համար վիրաւորուողն է: Բայց Ան շարունակ ծանուց իր երկրորդ գալուստը: Նախ խոնարհութեան մէջ եկաւ, դարձեալ պիտի գայ փառքով: Այն օրը բոլոր մարգարէութիւնները պիտի իրականացնէ: Ինք պիտի ըլլայ թագաւոր եւ բոլոր ազգերը իրեն երկրպագութիւն պիտի ընեն:

Հոս ռաբբին ուրիշ հարց մը մէջ բերաւ:

— Մենք Աստուծոյ սիրելի ժողովուրդն ենք, եւ սակայն 2000 տարի է ի վեր աշխարհի ամէն կողմերը ցրուած, ամէն տեղ մերժուած, ամէն տեղ հալածուած ենք: Սանկա ի՞նչպէս կը բացատրէք:

— Մոռցած էք, ըսի անոր, ձեր հայրերուն սա խօսքը. «Անոր արիւնը մեր վրայ ու մեր ուղիներուն վրայ ըլլայ»: Դուք կը տառապիք, վասնզի 2000 տարի կայ որ ձեր հայրերը Քրիստոսը մերժեցին: Անոնք ականջ չդրին իր ազաւանքներուն, Ով երուսաղէմ, երուսաղէմ... քանի անգամ քու տղաքներդ ժողովել ուզեցի... եւ դուք չուզեցիք... քար մը քարի վրայ ամենեւին պիտի չթողուն քու մէջդ, անոր համար որ չճանչցար քու այցելուներդ. ժամանակը»: Ձեր տառապանքները ձեզի համար Աստուծոյ պատգամն են:

Որդին հօրը կը նայէր, յետոյ աչքերը իմ վերայ սեւեռելով յուզմամբ ըսաւ, «Ոհ, Այսպէս է որ կը բացատրէք մեր ցրուած ըլլալը»:

Խօսակցութիւնը տեւեց մինչեւ ժամը 6էն աւելի: Ռաբբին իր աշակերտներուն քով վերադարձաւ եւ զանոնք ինծի ներկայացուց, «Երիտասարդներ, ըսի անոնց, պիտի գայ օրը ուր հրեայ ժողովուրդը աշխարհի մեծ միասնարևի

պիտի տայ: Հաւ սորվեցէք Աստուծոյ խօսքը: Զայն գործածելու պէտքը պիտի ունենաք»:

Ռաբբին որդին ինծի ընկերացաւ եւ առաջարկեց որ մօտակայ գիւղի մեծ ռաբբին այցելութիւն մը ընեմ: «Մենք Մեսիային կ'սպասենք», ըսաւ ան, «Իսկ դուք Քրիստոսի երկրորդ գալուստեան կ'սպասէք, ասիկա անպայման նոյն բանն է»: Իրարմէ բաժնուեցանք այս խօսքին վրայ:



Երկու օր ետք, մօտակայ գիւղի մեծ ռաբբին գացի:

— Տիար ռաբբի, ըսի անոր, կը կարծէ՞ք թէ ներկայ դէպքերուն եւ Մեսիայի գալուստեան միջեւ կապակցութիւններ կան:

— Գրեթէ բոլոր ռաբբիները, ըսաւ ան, որոնք մարգարէութիւնները կը սերտեն, այնպէս կը սեպեն թէ ներկայ քաղաքական դէպքերը Մեսիային գալուստեան պատրաստութիւններն են: Անոնք աշխարհային մեծ խառնակութեան մը կը սպասեն որմէ ետք Մեսիան ինքզինք պիտի յայտնէ եւ ամբողջ աշխարհէ պիտի ճանչցուի, որպէսզի կատարուի Մաղաքեայ մարգարէութիւնը թէ, «Ձեր փնտրած Տէրը... որու կը հաւնիք, յանկարծ իր տաճարը պիտի գայ»:

Անոր պատմեցի թէ ինչպէս մուհամետականներէ շատ մը վկայութիւններ հաւաքած էի անոնց Տէրոջը սպասելուն մասին: Յետոյ անոր ըսի.

— Իսրայելացիները Մեսիային կ'սպասեն, մուհամետականները Անոր մօտաւոր գալուստեան զօր կը կոչեն Սիան իսա: Մենք քրիստոնեաներս կը սպասենք Քրիստոսի երկրորդ գալուստին: Ի՞նչ կապակցութիւն կը գտնէք այս երեք անձնաւորութեանց միջեւ:

Այն ատեն առանց սեւէ վարանման, մեծ ռաբբին հետեւեալ բառերը արտասանեց.

— Ասիկա անշուշտ նոյնն ըլլալու է:



Այսպէս, երբ դէպի ետ կը նայինք, հրեաներուն ինչպէս նաեւ մուհամետականներուն հետ հասկացողութեան գալ զժողուր է, բայց գալիքին համար միութիւնը կարելի ըլլալէն հետո չէ:

Ս. Գիրքը կը խօսի մէկ օրուայ մէջ ծնած ազգի մասին: Ո՞վ գիտէ թէ օրը մօտ չէ ուր զօրաւոր արթնութիւն մը պիտի բարձրացնէ ամբողջ իսլամութիւնը:

Ո՞վ գիտէ նաեւ թէ այլեւս ժամը պիտի չընչէ ուր Իսրայէլ Փրկիչը պիտի ճանչնայ: Պօղոս

ՊԼՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ
ՀԱՅՈՑ ՀԱՌԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ

.....

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ. —

Կայ պատմափիլիսոփայական ըմբռնում մը, որու համաձայն պատմութեան առանցքը նիւթն է: Այդ տեսութիւնը ունեցողներ, կը խորհին թէ մեծ դէպքերը տեղի կ'ունենան ու մեծ մարդիկը կը շարժին մասնաւորաբար տնտեսական ազդակներէ ու շարժառիթներէ մղուած: Օրինակի համար, ազգեր ու անհատներ քրիստոնէութիւնն ընդունած են ու կ'ընդունին ոչ այնքան հոգեկան դրդապատճառներէ, որքան նիւթական տւելի բարւոք վիճակ մը ունենալու բաղձանքէն առաջնորդուած:

Այս տեսութիւնը, — որ տնտեսական նիւթապաշտութիւն (materialisme) անունով ծանօթ է, մարդը կը ստորնացնէ եւ վերջ ի վերջոյ փոքր մը կերի համար իր գոյութիւնը քաշքշող անբան անասունի աստիճանին կ'իջեցնէ:

Բայց մենք տարբեր գաղափար ունինք: Կը հաւատանք եւ փորձառութիւնն ալ կը հաստատէ թէ մարդը՝ որքան ալ որ ինկած՝ զեռ իր մէջ ունի բան մը աստուածային պատկերէն: Ուստի նիւթը չէ որ զինք պիտի յազեցնէ: Օգոստինոսի խօսքով՝ անիկա Աստուծմէ եւ Աստուծոյ համար ստեղծուած է, քանի զԱյն չունի, չգոհանար: Իր փնտռութիւնն ու աշխատանքին թաքուն մղիչն ու վերջնական նպատակը Աստուած է: Երբ Անկէ հեռի է, զինք չկրնար հրջանկացնել ո՛չ նիւթական ամենէն բարւոք վիճակը եւ ոչ ալ աշխարհային ամենէն փայլուն դիրքը:

Բայց մարդը որչափ որ ալ փնտռէ, իր բնական լուսով չկրնար գիտնուած գտնել, ուստի նա

ընդառաջ կ'երթայ եւ կը յայտնէ անոր Ինքզինքը. եւ իր յայտնութեան կատարելութիւնն է Բրիստոս:

Արդ՝ Բրիստոս ոեւէ ազգի լայն խաւերուն մէջ կը թափանցէ եւ զանոնք Իրեն կը հնազանդեցնէ ընդհանրապէս երկու ազգականերու ներգործութեամբ: Նախ՝ իր Հոգին կ'ազդէ անհատներու վրայ, կը զգացնէ անոնց երկրաւոր կեանքի սընտանկութիւնը եւ կ'արթնցնէ անոնց մէջ կարօտ մը դէպի յաւիտենականը: Ատոր է որ կ'ակնարկէ Յիսուս, երբ կը յայտարարէ թէ Իրեն կրնան երթալ միայն անոնք զորս երկնաւոր Հայրը կը քաշէ (Յովհ. 2. 44): Այդպիսի «քաշուող» անձեր երբ լսեն Աւետարանը, ուրախութեամբ կ'ընդունին զայն, կ'ապաշխարեն ու նորէն կը ծնանին: Ապա Տէրը կ'առաջնորդէ ատոնցմէ ոմանք տառապանքի ու խաչի ճամբայէն, կը մղէ զանոնք յօժարակամ իրենց մարմինն մէջ լեցնելու Բըրիստոսի կրած նեղութիւններուն պակսութիւնը (Կող. Ա. 24) և իրենց Հարչարանքներուն ու մարտիրոսական արեան միջոցաւ կը պատրաստէ ուրիշ սրտեր ընդունելու ճշմարտութեան սերմը:

Այս ազդակին զուգընթաց, երբեմն ալ անոր ներգործելու սկսելէն ատեն մը ետք Տէրը կը գործածէ ուրիշ մըն ալ: Հրաշքի միջոցաւ ուղղակի կը միջնորդէ Ան: Այդպէս եղաւ առաքելական դարուն, այդպէս կ'ըլլայ հիմա ալ, երբ Աստուած կ'ուզէ մասնաւոր շորձ մը տեսնել. հեթանոս ազգի մը մէջ: Ասոր իբր պայացոյց կարելի է շատ օրինակներ բերել⁽¹⁾ բայց հոս տեղի չէ:

Այժմ միայն այսքանը ըսենք որ այդ երկու ազգականներն էին, որոնք Աւետարանին յաղթանակը ապահովեցին մեր երկրին մէջ: Այս յօդուածաշարքին մէջ կրկին ու կրկին ցուցուցինք թէ ինչպէս կ'ընդգործէր առաջինը, ինչպէս թագէտի եւ Բարթողոմէոսի օրերէն սկսեալ մարտիրոսներու արիւնք հոսեցաւ ու կակուղցուց գետինը եւ թէ ինչպէս Հռիփսիմեանց նահատակութիւնը ցնցեց լազճերը եւ կարօտ մը արթնցուց սրտերուն մէջ դէպի ճշմարտութիւնը:

Այդ ազդակին հետ ի դօրու էր նաեւ երկրորդը, — եթէ ոչ սկիզբէն ի վեր դէժ վերջին ատենները: Տրդատի եւ իր պալատականներուն դայլախտութիւնը եւ ապա անկէ բուժուած՝ Դրի-

(1) Գերմաներէն հասկցող ընթերցողին կը յանձնարարենք կարգաւ D. Joh. Warneck, Paulus in Lichte der heutigen A. Heidenmission էջ 28-48: Եւ հոգ պիտի նկատեն թէ հրաշքը ինչ ներգործութիւն ունեցած է Պօղոսի ստեղծ եւ հիմա ալ հեթանոս ժողովուրդներու մէջ:

առաքեալ Հոով. ԺԱ. 15ի մէջ կ'ըսէ, «Անոնց ընդունուիլը ինչ պիտի ըլլայ, բայց եթէ մեռելներէն կենդանի ըլլալ»: Ով Աստուծոյ մեծութեան ու իմաստութեան եւ գիտութեան խորունկութիւնը: Անիկա ամէնն ալ անհաւատութեան մէջ արդիւեց, որպէսզի ամենուն ողորմի:

Թարգ. Ի. Յ. Ա.

գործի ազդեցիկն միջոցաւ արարք մըն էր որ զօրեղ ազդեցութիւն գործեց թէ՛ ենթականերուն և թէ բոլոր ժողովուրդին վրայ:

Ահա այդ երկու ազդակները եւ Գրիգորի ազդու քարոզները գործածեց Ս. Հոգին՝ խոնարհեցնելու հայ ժողովուրդը: Կրնանք ըսել թէ Գրիգոր վերապէն ելլելու յաջորդող օրերն ու ամիսները, նոյնիսկ տարիները Պենտեկոստէ մը եղան մեր ազգին համար: Աւանդութեան մը համաձայն ոչ թէ փոքր հապա խիստ մեծ թիւ մը կը կազմէին անոնք, որոնք այդ ժամանակին ապաշխարեցին, մկրտուեցան «Հոգւով Սրբով եւ կրակով» և դարձան Աստուծոյ զաւակներ: Եւ մենք կը հաւատանք ատոր իրականութեան, քանզի երեւոյթ մըն է որ պատահած է ոչ թէ միայն առաքելական դարուն, հապա կրկնուած յաճախակի:

Այս նորադարձներուն միացան նաեւ այն քրիստոնեաները, որոնք Գրիգորի քարոզութենէն տուա՞լ գոյութիւն ունէին, բայց Տրդատի հալածանքներէն ստիպուած թաքուն կը մնային եւ իրենց պաշտամունքները կը կատարէին անտառներու, քարալիներու եւ ուրիշ գաղտնի տեղերու մէջ: Ասոնք ալ պատկառելի թիւ մը կը կազմէին եւ քանի որ գտուած էին տառապանքի քուրային մէջ, աւելի հոգեւոր էին քան թէ նորադարձները:

Այսպէս քրիստոնէութիւնը իր յաղթանակը տարու հայաստանի մէջ աստուածային եւ ոչ թէ նիւթական ուժերով: Այս վերջինները անոր աշակցեցան, երբ նա արդէն յաղթած էր ու նուաճած բազմաթիւ սրտեր՝ առաւելապէս իր մարտիրոսներու արիւնովը:

ԳՐԻԳՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.—

Քաջալիւրուած այս հոգեւոր արթնութենէն և ամբողջ սրտով քրիստոնէութեան նուիրուած Տրդատի արքայական հեղինակութենէն՝ Գրիգոր ոչնաւ աշխատիլ եռանդով, որպէսզի նոր կրօնը հետզհետեւ տարածուի եւ խորապէս արմատանայ ամբողջ Հայաստանի մէջ: Կենաց բանին քարոզութեան զուգընթաց գործածեց նաեւ հետեւեալ միջոցները արմատախիլ ընելու հեթանոսութիւնը եւ գորացնելու քրիստոնէութիւնը:

1. Եկեղեցիներու շինութիւն. — Նախ ձեռնարկեց չորս հոգակաւոր եկեղեցիներու շինութեանը՝ Աղաթանգեղոսի պատմածին համաձայն այն տեղերուն վրայ, զորս իրեն տեսիլքի մը մէջ ցուցուցած էր Յիսուս, Աստուծոյ Միածինը, երկինքէն իջնելով: Ահա ատկէ կը ծագի հայոց հայրապետին բնակավայրին էջմիածին յորջորջումը:

Գրիգոր նախ շինեց երեք փոքր վկայարան-

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ԳՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ

.....

ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԵՂԵՔԵՐԸ.—

Այս երկու արտայայտութիւնները՝ մեղք եւ եկեղեցի հակասական են, անոնք պէտք էն քով քովի ըլլային: Մեղքը խաւարին գործն է, մինչդեռ եկեղեցին Աստուծոյ գործն է: Երբեք կարելի չէ վերէն եկածը վարէն եկածին հետ համաձայնեցնել: Սակայն քրիստոնեային կեանքին մէջ մեղքը պէտք մը ըլլալէն կը դադրի, բայց եւ այնպէս կարելիութիւն մը կը մնայ, որ

ները, — մին Հռիփսիմէի ու իր 37 նահատակակիցներուն, երկրորդը Գայիանէի ու իր երկու ընկերներուն մարտիրոսացման վայրերուն վրայ, իսկ երրորդը կոյսերուն բնակած հնձանին տեղը: Առաջինն ու երկրորդը կը կոչուին Ս. Հռիփսիմէի ու Ս. Գայիանէի անուններով, իսկ երրորդը Շողակաթ: Կը թուի թէ կոյսերու հնձանը Գրիգորի առանձնարանն էր եւ անկէ տեսած էր «լուսեղէն շողերու կաթիլը եւ Միածինին իջնելը»:

Այս երեք տաճարները շինուեցան Գրիգորի իբրեւ հպիսկոպոս ձեռնադրուելէն առաջ: Իսկ ատկէ ետքը շինուեցաւ նաեւ չորրորդը, էջմիածնայ մայր տաճարը, կաթողիկէն, որ կը կոչուի Ս. Աստուածածին: Աղաթանգեղոսի վկայութեան համաձայն մայր տաճարը շինուած է Սանդարա մէտ չաստուծոյն մեհեանին տեղը: Կաթողիկէն հայ ճարտարապետութեան ամենէն թանկագին կոթողներէն մին է: Իսկ Ս. Հռիփսիմէ և Ս. Գայիանէ տաճարներն ալ մեծ անուն ունին քանի որ իրենց մէջ ամփոփած են անոնց նշխարները:

Այս եկեղեցիներու շինութեան ատեն մայրաքաղաքի բնակչութիւնը կը մասնակցէր եռանդով ու մեծ զոհողութիւններու գնով, ինչպէս Սողոմոնեան տաճարի շինութեան ատեն ըրած էր Իսրայէլ: Եւ մեր մէջ Սողոմոնի տեղը կը բռնէր Տրդատ, որ իր երբեմնի զոհերը պատուելու համար չէր ընկրկեր ոեւէ զօւարտութեան եւ զոհողութեան առջիկ:

Գրիգորի եւ իր յաջորդներուն օրով այս եկեղեցիներուն վրայ հետզհետէ աւելցան ուրիշներ ալ եւ մեր երկիրը լեցուեցաւ ազօթարաններով:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

աւա՛ղ, շատ յաճախ մեր ուղեւէն աւելի իրականութիւն մը կը դառնայ:

Կարդալ Ա. Յովհ. Ա. 5-8, Բ. 1, 2, Գաղ. 2. 1-5, Ա. Կոր. Ե. 1-5:

Այս հատուածներէն առաջինը մեզի կը ցուցնէ այն ընկացքը որ մեր անձնական կեանքերուն համար հետեւելու ենք սրբութեան ճամբուն մէջ: «Աստուած լոյս է» կ'ըսէ Տրդ համարը, որ է մեր Ստեղծիչին եւ Փրկչին բացարձակ սրբութեան ապացոյցը: Մենք իր փրկածները կը քալենք լոյսին մէջ, այսինքն որոշած ենք մեր կեանքը Աստուծոյ կամքին համաձայնեցնել, ինչպէս որ ան մեզի յայտնուած է Սուրբ Գիրքին մէջ եւ Ս. Հոգիէն լուսաւորուած մեր խղճմանքներով: Որքան Աստուծոյ մօտենանք, անքան աւելի լոյսը կը պայծառանայ եւ մեր մեղքը կը յայտնէ, որ գիտակցութիւն կը դառնայ թէեւ առաջ անգիտակցութիւն էր. բայց մեղքը ճանչցուածին պէս, անիկա հաւատացեալին կողմէն դատապարտուած եւ Յիսուս Քրիստոսի քաւարար արեան զօրութեամբ մաքրուած է: Այսպէսով կ'իրականանայ Առակ. Դ. 18ի խօսքը, «Արդարներուն ճամբան ծագող լոյսի պէս է որ երթալով կը լուսաւորուի մինչեւ կատարեալ օր ըլլայ»: Օրը Քրիստոսի գալուստն է, որ իր աստուածային եւ սուրբ ներկայութեամբ, պիտի անհետացնէ վերջին շուքերը, ըստ Ա. Յովհ. Գ. 2ի, «Տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք բայց գիտենք որ երբ Անիկա յայտնուի, Անոր պէս պիտի ըլլանք, վասնզի զԱնիկա պիտի տեսնենք ինչպէս է»: Մենք կը քալենք այս լոյսին մէջ եւ զէպի այս լոյսը, օր մը Քրիստոսի պէս ըլլալու համար:

Գալով միւս երկու հատուածներուն, անոնք մեզի կը ցուցնեն այն դիրքը որ մենք պէտք է բռնենք մեր եղբայրներուն մեղքերուն հանդէպ:

Այս դիրքը երկուքի կը բաժնուի: Ամենէն առաջ ասիկա այն գութի զգացումն է, որ քրիստոնեան կը տանի մինչեւ իր ինկած եղբոր հետ մէկ ըլլալուն, Յիսուս Քրիստոսի օրինակին պէս (Գաղ. 2. 1-5): Յետոյ այն հաստատամտութիւնն է որ պարագային համեմատ կրնայ տանիլ մինչեւ եղբորը հետ առժամապէս բաժանման, եթէ ան չուզեր ճանչնալ եւ ձգել մեղքը: Յիսուս իր օրինակով հաստատեց այս կրկնակ դիրքը «Շնալ չեմ դատապարտեր քեզ. գնա ու ասկէ ետեւ մեղք մի գործեր» ըսաւ շնացող կնոջ (Յովհ.Ը. 11):

Այն որ կ'ուզէ ի գործ դնել այս երկու պարտականութեանց առաջինը, պէտք է իր եղբորը սրբութիւնը իր սրտին վրայ ծանրացած ըլլայ,

ինչպէս նաեւ իր անձնական սրբութիւնը: Իր սիրտը ամբողջութեամբ պրաւող այս հարցը ամէն բանէ առաջ ի յայտ պիտի գայ ծածուկ կերպով մը, գաղտուկ կամ հրապարակաւ եղած միջնորդական աղօթքով (Յակ. Ե. 16): Նաեւ այն պիտի երեւնայ խոնարհ եւ այլազան յորդորներու, սիրալիի խրատներու եւ քաջալերական խօսքերու մէջ (Ա.թեա.Ե.11): Այսպիսի պաշտօնի մը համար շատ դատողութիւն, պարզութիւն եւ ճշգրտութիւն պէտք է որ միմիայն հովիւին գործը չէ այլ բոլոր հաւատացեալներուն (Եփ.Դ.25): Յետոյ գութի մեզ պիտի պարտադրէ իրարու ներելու եւ համբերելու (Կող.Գ.13), վասնզի բնական այսինչ թերութիւնը կայ որ յաճախ կըրկին կ'երեւնայ վերջնականապէս յաղթուելէ առաջ, ասոր համար պէտք է սորվինք փոխադարձաբար իրարու յանցանքները ներել (Եփես. Դ. 32): 2⁵ որ Աստուած շարունակ մեր գիտակցաբար թէ անգիտակցաբար զործած յանցանքները կը ներէ:

Երբ եկեղեցիին մէջ տեւէ անկում տեղի կ'ունենայ, խիստ զգուշանանք այդ մասին աջ եւ ձախ խօսելէ. եթէ Քրիստոսի սէրը մեր սիրտերը կը լեցնէ, մենք պիտի տառապինք եւ պիտի սորվինք ցաւ քաշել ինկած քրիստոնեային համար եւ անոր հետ. այսպէս էր որ կ'ընէր Պօղոս առաքեալ (Բ.Կոր. ԺԱ.29), նոյնիսկ մինչեւ յանցաւորներուն հետ ինքզինք խոնարհեցնելու աստիճան (Բ.Կոր.ԺԲ.19-21), ինչպէս Յիսուս Քրիստոս ինք ըրաւ: Քրիստոնեայ մը որ կ'իյնայ, արդէն ընդհանրապէս ինքնիրեն բաւականաչափ կը տառապի, առանց պէտք ըլլալու որ խիստ եւ անարգական դիրքով մը այդ տառապանքը աւելցուի: Խորհրդածենք Գաղ. 2. 1-5ը եւ սորվինք ինկած եղբայրը վերցնել ու իր բեռը կըրել աղօթելով իրեն համար, այսինչ մասնաւոր փորձութեան համար որուն ինք թշնամիին կողմէն կրնայ ենթակայ ըլլալ:

Պարագաներ կան սակայն, ուր քաղցրութիւնը եւ գութը փափաքուած արդիւնքը երեւան չբերեր, այն ատեն պէտք է երկրորդ դիրքը որդեգրել, այսինքն հաստատամտութիւնը: Յիսուս Քրիստոս ինք այս դիրքը գործածեց եւ կը պատուիրէ Մատթ. ԺԸ. 15-18ի մէջ: Այսու հանդերձ եկեղեցիին կողմէ ի գործ դրուած պատիժը բոն մըն է որ կարելի եղածին չափ պէտք է խոյս տալ եւ թողուլ որ Աստուած ինք ընէ զայն: Այսպէս է որ տեղի կ'ունենայ երբ եկեղեցի մը Ս. Հոգիով լեցուած է (Գործ. Ե. 1-11), բայց այսպիսի եկեղեցիները հազուադիւս են եւ առաքե-

լոց ժամանակն իսկ, մասնաւոր պարագաներու տակ մարդոց կողմանէ պատիժներ ի գործ դնել հարկ եղաւ 25° որ կը տեսնենք թէ Պօղոս առաքեալ կը պատուիրէ թեոսաղոնիկէցիներուն առժամապէս առէ՛լ յարաբերութիւն կտրել յայնքրիստոնեաներուն հետ որոնք անկարգութեան եւ անհնազանդութեան մէջ կ'ապրին (Բ. թեո. Գ. 6, 14-15): Այսպիսի որոշում մը գործադրել ճշմարիտ քրիստոնեայի մը համար ծանր բան է, բայց անիկա պարտադրուած է ընել Աստուծոյ սիրով եւ Անոր պատուիրանքներով: Հաւատացեալներ կան, որոնց խղճմտանքը քիչ զարգացած եւ փափուկ է, որոնց համար պատժողական կերպը աւելի աղեղնութիւն կ'ընէ քան Հափազանցութեամբ փափկութիւնը: Աստուած ալ գաւազան կը գործածէ, երբ իր կրկնակ ազդարարութիւնները արձագանգ չեն գտներ անհնազանգ քրիստոնեային հոգւոյն մէջ:

Այս պատժական ձեւը, կրնայ նոյնիսկ խիստ բնոյթ մը առնել երբ խնդիրը ոչ թէ պարզ անկումի մը մասին է որմէ անմիջապէս զղջմամբ կը կանգնի, այլ երբ յանցաւորը ծանր մեղքի վիճակի մը մէջ չ'ը յարատեւէ, որուն եկեղեցին տեղեակ է եւ որ տմբողջ եկեղեցին վկայութիւնը կրնայ փառնել ինքնաբերել, այն ատեն ազգու միջամտութիւն մը հարկաւոր է: Անդեղջ մեղաւորին հետ եղբայրական հաղորդակցութիւնը կտրել, զայն ալլեւ Տէրոջը սեղանէն կտրել, թողուլ որ ան իր աարին վերադառնայ, որ է աշխարհը, ահա՛, անտարակոյս այս է որ առաքեալը լսել կ'ուզէ սա հանգրստութեամբ — «Սատանային մատենք» (Ա. Կոր. Ե. 5 եւ Ա. Տիմ. Ա. 20): Այնպէս չի՞ թոյլի թէ այս նոյն կարգի մարդոց է որ կ'ակնարկէ Յովհաննէս առաքեալ Ա. Յովհ. Ե. 16ի մէջ:

Բարեգէպութիւն մըն է որ այսպիսի պարագաներ աւետարանական եկեղեցիի մը մէջ հաղուադէպ եւ: Պէտք է Աստուծոյ խնդրել որ զանոնք մեզի խնայէ եւ ինք անձամբ ի գործ դնէ խիստ պատիժները որոնք շատ փափուկ են:

Թող Սուրբ Հոգին մեզի առաջնորդէ եւ օգնէ որպէսզի կարենանք իւրաքանչիւր մասնաւոր պարագայի յարմար եղող դիրքը ունենալ եւ Ան մեզ միշտ վառէ մեր եղբայրներուն օգնելու եւ զանոնք փրկելու խորունկ փափաքով: Զայս ընելով պիտի կատարենք Յակ. Ե. 19, 20ի գեղեցիկ պատուէրը, «Եղբայրներ, եթէ ձեզմէ մէկը ճշմարտութենէն մոլորի, ու մէկը զանիկա դարձի բերէ, գիտցած ըլլալ թէ... հոգի մը մահուանէ կ'ազատէ ու մեղքերու բազմութիւնը կը ծածկէ»:

ՊԱՏԱՆԵԱՅ

ՔՈՒ ՆԵՂՈՒԹԵԱՆԴ ՕՐԸ

ԻՆԾԻ ԿԱՆՁԷ



Աղքատ որբեւորի կին մը առաւօտ մը իր գաւակներուն ըսաւ.

— Սիրելիներս, այսօր ձեզի ուտելու բան մը չեմ կրնար տալ, ո՛չ հաց ունիմ, ո՛չ ալիւր, ո՛չ հաւկիթ եւ ոչ ալ զրպանիս մէջ սէնթ մը: Աղօթեցէք Աստուծոյ որ մեզի օգնութիւն հասցնէ, որովհետեւ Ան հարուստ ու ողորմած է եւ ինքն է որ մեզի կ'ըսէ. «Բու նեղութեանդ օրը ինծի կանչէ, ես քեզ պիտի ազատեմ ու Գունգիս պիտի վառաւորեմ»:

Ուստի փոքրիկները մեկնեցան դպրոց, անօթի ու տխրադէմ:

Երբ եկեղեցիին առջեւէն կ'անցնէին, փոքրիկ Գէորգ նշմարեց որ դուռը բաց էր: Մտաւ ներս անմիջապէս, գնաց հաղորդութեան սեղանին առջեւ, ծունկի վրայ եկաւ եւ սկսաւ աղօթել ըրարձրաձայն:

«Ով բարի Հօյր, որ երկինքն ես, մենք խեղճ պղտիկներս, այլիս ուտելու բան մը չունինք, բարի մայրիկը ո՛չ հաց ունի, ո՛չ ալիւր, ո՛չ հաւկիթ եւ ո՛ճ ալ սէնթ մը իր զրպանին մէջ: Ուստի հո՞՞ճ մեզի ուտելու բան մը տալ որպէսզի մեր մայրիկին հետ անօթի չմեռնինք: Ամէն»:

Փոքրիկ Գէորգ այսպէս իր ընտանիքին պէտքերը Աստուծոյ ներկայացնելէն վերջ գնաց դպրոց եւ ուրիշ տեւէ ժամանակէ աւելի խելօք եւ ուշադիր հետեւեցաւ իր դասերուն:

Երբ դասերը վերջացան, պղտիկները իրենց խեղճուկ տանը ճամբան բռնեցին, ու երբ իրենց սենեակէն ներս մտան, ո՛հ, ի՛նչ անակնկալ սեղանին վրայ մեծ աման մը լեցուն ալիւր, կողով մը հաւկիթ, հաց մը ու փոքրիկ քսուկ մը զրամ կար:

— Մայրի՛կ, աղաղակեց Գէորգ ուրախութեամբ, այս բոլորը հրեշտակը բերաւ:

— Այո՛, պատասխանեց մայրը, թէ իրապէս հրեշտակի մը չափ բարի մէկն էր:

— Ուրեմն ո՞վ էր:

— Մեր բարի եւ հարուստ զրացունին, դատաւորին կինը: Երբ դուն աղօթելու համար եկեղեցի մտած ես, ինք ալ հոն է եղեր, իր նստարանին վրայ, բայց դուն զինքը չես տեսած: Ինք քեզ

տեսած է սակայն եւ քու աղօթքդ լսած: Աստուած անոր սիրտը շարժած է եւ զանիկա հրեշտակի տեղ գործածած է մեզի օգնութիւն հասցընելու համար, որովհետեւ Ան միշտ կ'ազատէ բոլոր անոնք որ վստահութեամբ Իրեն կը դիմեն:

Ո՛րքան յաճախ կը հանդիպինք փոքրիկներու եւ նոյնիսկ մեծերու, որոնց երբ կը հարցնենք թէ աղօթք կ'ընեն, կը պատասխանեն, «Աղօթել չենք գիտեր, եթէ գիտնանք՝ կ'ուզենք աղօթել»:

Այսպիսիներուն համար ի՞նչ լաւ օրինակ մըն է պատիկ Գէորգ: Ան աղօթելու պէտքը զգաց, որովհետեւ կարօտ էր Աստուծոյ օգնութեան: Բայց ատոր համար ի՞ր մօրմէն չխնդրեց որ նախ իրեն աղօթք ընել սորվեցնէ: Ուղղակի գնաց Աստուծոյ ներկայութեան, ծունկի եկաւ եւ իր կարօտութիւնը ինչ որ էր անիկա իր երկնաւոր Հօրը

ներկայացուց ամենապարզ կերպով առանց մեծ բառեր գործածելու, առանց գոց սուրճած մէկ աղօթքը կրկնելու, վստահ ըլլալով որ Աստուած կը լսէ եւ եթէ ուզէ կարող է ամէն բանի:

Մեր կեանքին մէջ կա՞յ արդեօք վայրկեան մը որ Աստուծոյ օգնութեան պէտք չունենանք: Իսկ կա՞յ բան մը զոր Աստուած ընելու կարող չըլլայ եւ կամ կա՞յ տեղ մը ուր Աստուած ներկայ չըլլայ ու մեր աղօթքը լսելու պատրաստ չգտնուի:

Ուստի ինչո՞ւ չդիմենք Անոր ամէն ատեն ու ամէն տեղ, ինչո՞ւ չբանանք Անոր մեր սիրտը ամենայն վստահութեամբ ու հաւատքով: Մնացածը Իրեն ձգնենք, թող Ինք կարգադրէ իր ուզած կերպով: Անոր բոլոր կերպերն ալ մեզի համար բարի են:


Յ. Բ.

(Շար. խմբագրականի)

ԺԴ. գլուխները: Հաւատացեալներն իրենց պարգեւներն ունին Ս. Հոգիէն: Անոնք Ս. Հոգիին ազդեցութեան եւ կառավարութեան ենթակայ ըլլալով գիտեն ուրախութեամբ եւ խոնարհութեամբ գործակել այդ պարգեւները եկեղեցիին շինութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Սատանան յաջողած է մեծ աւերներ գործելու Աստուծոյ եկեղեցիին մէջ զրկելով հաւատացեալները իրենց պարգեւներու եւ պարտականութեանց գիտակցութենէն. ատոր համար հաւատացեալներ կ'ըլլան զանգաղ, անհոգ, եսամոլ, ինքնազոհ, քննադատ, մոռնչ եւ անկենդան, ու հաւաքութիւններ կ'ըլլան ձանձրալի, թմրեցուցիչ ու անպատու: Քրիստոս երբեք ձանձրացուցիչ չէ, եթէ եկեղեցի մը թմրած է, եթէ ժողովներ իրենց հմայքը կորսնցուցած են, հարկ է անձնաքննութեան մտնել: Հովիւ եւ հաւատացեալներ պէտք է խոնարհին, փոխուին, նորոգուին, իրենց դիրքերը գրաւեն եւ Աստուծոյ իրենց յանձնած պաշտօնը կատարեն: Պէտք է ամէն հաւատացեալ Ս. Հոգիին լուսով քննէ մանրակրկիտ կերպով թէ ի՞նչ է իր պաշտօնը այն եկեղեցիին մէջ ուր Տէրը գինք դրած է. իմաստութեան խօսք, գիտութեան խօսք, հաւատք, բժշկութեան պարգիւ, հրաշագործութիւն, մարգարէութիւն, հոգիներու ընտրութիւն, զանազան լեզուներ, լեզուներու թարգմանութիւն: Այսպարգեւները կամ ասոնցմէ մեր նախասիրածը մեր վրայ որպէս հազուատ հազնելու չենք հապա դալն կամ զանոնք ընդունելու ենք Սոփոք Հոգիէն: Եկեղեցիին մէջ անգործ հաւատացեալ ըլլալու չէ, ինչպէս որ չկայ առեղջ մարմին մը որ ունենայ անպաշտօն ու անգործ անդամ մը: Եկեղեցի մը միաբանութիւնը ամբողջ կազմածին ներդաշնակ գործունէութեան մէջ է: Յ. Ն. Ղ.

ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ



ՓԱՐԻԶԻ ՄԻՍԻԹԵԱՆ ԺՈՂՈՎՃ

Ահա քանի մը տեղեկութիւններ «Բանբեր»ի ընտանիքին, Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիներու վերջին Միութեան ժողովի մասին:

1937ի Միութեան ժողովը տեղի ունեցաւ Յունիս 24-26 փառիզի մէջ, հետեւեալ ժողովականներու մասնակցութեամբ:

Խալսէյլէն Վեր. Յ. Ղազարոսեան, Աւետչ. Վ. Սահակեան եւ Ս. Պապալեան, Ս. Գրածախ Աւետչ. Կ. Պատաքեան, Էղբ. Ա. Գասպարեան եւ Ե. Քիւրքճեան:

Վալանսէն Հովիւ Բրօֆ. Դ. Խայկեան:
Յպէնասէն Վեր. Ա. Օ. Փափազեան:
Լիոնէն Վեր. Ժ. Կ. Պարսումեան եւ Աւետչ. Կ. Պարսումեան:

Սէնթ Լէթիէնէն Աւետչ. Ի. Աբրահամեան:
Փարիզէն Հովիւ Զ. Պուտաքեան, Աւետչ. Մ. Վէրիլեան, Էղբ. Թ. Գայսէրլեան, Ա. Միսիրեան, Հ. Պատիկեան, Գ. Քէօսէեան:

A. C. Օ. ի միսիոնարութեան կողմէ Տնօրէն Վեր. Dr. P. Berron եւ Prof. L. Kuehm ու M^{me} de Félice.

Իբր հիւր անդամ Սթրազպուրկէն Mr. Schmidt, Զուիցերիոյ Guemligenի Diakonissen houseէն քոյր Զ. Ղազարեան, Հոգմմէն Kaiserswertի Diakonessներէն քոյր Ա. Մանուկեան, Լիգնէն Տիկ. Կ. Պարսումեան եւ Սէնթ Լէթիէնէն Տիկ. Ի. Աբրահամեան:

Համագումարս հետապնդեց երկու նպատակ: Նախ զարկ տալ եւ զօրացնել հոգեւոր գործաւորներու ներքին կեանքը: Առ այս բաւական ժամանակ տրուեցաւ Ս. Գրային խորհրդածութեանց եւ ալօթքներու, երկրորդ՝ զբաղիլ զանազան եկեղեցիներու ներքին կեանքով, ընթացիկ խընդիրներով եւ ներկայացուած հարցերով:

I ՀՈԳԵՒՈՐ ԺՈՂՈՎՆԵՐ.—

Այս մասը ոչ միայն յատկացուած էր Միութեանս պաշտօնական ներկայացուցիչներուն, այլ նաեւ բոլոր ժողովուրդին, ու Փարիզի եկեղեցիին զաւակներէն ոմանք կրցին գալ ու օգտուիլ անոնցմէ:

Աստուծոյ խօսքը մատակարարուեցաւ զանազան եղբայրներէ որոնք յատկապէս հրաւիրուած էին:

Վեր. Dr. Berron նախ խոզարկու պատգամ մը բերաւ նիւթ ունենալով Յովհ. Ե. 44, «Աստուծոյ էկած փառքը փնտոել եւ մերժել մարդոցմէ եկածը»:

Nogentի Աստուածաբանական դպրոցի ուսուցիչներէն Mr. J. M. Nicole խօսեցաւ Կող. Բ. 28ի վրայ յստակ եւ խնամուած աշխատութիւն մը ներկայացնելով:

Mr. Roser, հայասէր եւ նուիրուած Աւետարանիչ մը, որ կը գործէ Փարիզի գործաւոր դասակարգին մէջ, խօսեցաւ Յայտ. Ա. 17ի վրայ, բերելով խրախուսիչ պատգամ մը:

Mr. G. Lauga, Փարիզի հանրածանօթ պիւճաբան եւ զգայուն հովիւը, շատ խորունկ եւ յուզիչ մտածումներ ներկայացուց «Տառապանքի պտղաբերութեան» մասին, նիւթ ունենալով Յովհ. ԺԲ. 24-28ը:

Prof. Darbigue, Tournefortի եկեղեցիին հովիւը, որ տարիներէ ի վեր նուիրուած եւ բարեացակամ եղբայր մը եղած է Փարիզի հայ Աւետ. եկեղեցիին, խօսեցաւ Եբր. ԺԱ. 1-10ի վրայ, բերելով շեշտիչ պատգամ մը հաւատքի վրայ:

Այս զանազան պատգամները շատ օրհնաբեր եղան բոլորիս, զմեզ առաջնորդելով անձնաքննութեան, խոստովանութեան, յոյսի, քաջալերութեան եւ հաւատքի: Հարկ եղած ժամանակը տրուեցաւ աղօթքի:

II ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ.

Միութեանս ղռնփակ նիստերուն մէջ, կարդացուեցաւ զանազան եկեղեցիներու տարեկան

տեղեկագիրները: Յայտնի եղաւ որ Աստուծոյ շնորհքով ամէն տեղ գործը շարունակուած է կանոնաւորապէս: Տէրոջը հաւատարմութեամբը կարգ մը դժուարութիւններ վերցուած կամ հարթուած են: Կատարուած են յառաջդիմութիւններ եւ ընդհանուր առմամբ եկեղեցիներուն ազդեցութիւնը կ'աճի եւ կ'արմատանայ:

Երկար խորհրդածութիւններու նիւթ եղան տեղեկագիրներէ բղխեալ հարցերը: Անոնք քննընկերացան եղբայրական սիրով եւ լայնմտութեամբ: Այս խորհրդածութիւններով կարգ մը հարցեր ստացան իրենց լուծումը: Ուրիշներ յղուեցան Executive Comitêի:

Executive Comitêի հայ ներկայացուցիչներու պաշտօնէութեան շրջանը լրացած ըլլալով, ձեռնարկուեցաւ քուէարկութեան եւ ընտրուեցան երկու տարուան համար —

Վերք. Յ. Ղազարոսեան, եւ Ժ. Պարսումեան ու Բրօֆ. Խայկեան:

Վերջնաբուեցաւ նաեւ Միութեան ժողովի քարտուղարը:

III ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՒ ԾՐԱԳԻՐՆԵՐ.—

Ահա մի քանին այն որոշումներէն զորս Միութեան ժողովը եւ Ex. Comitêն տուին.—

ա. Որ. Վեր. Dr. Berron աւելի ժամանակ տայ Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիները այցելելու: Եկեղեցական ներքին դժուարութիւններու համար վրոյսին թէ Տնօրէնին եւ թէ ալ Միութեան նախագահին որոշ ի հետեւանս այս վերջինը իրաւասու եւ պարտական զգալ յօժարութիւն ունեցող եկեղեցիին օգնութեան փութալու եւ դժուարութիւնները լուծելու Միութեան անունով:

բ. Որ ըստ կարելոյն մօտակայ հովիւները գիրար փոխանակեն փոխադարձաբար օգտակար ըլլալու նկատումով:

գ. Վերստին խորհրդածութեան առարկայ եղաւ մկրտութեան հարցը եւ յետ քննութեան կրկին որոշուեցաւ մնալ ցարդ որդեգրուած մէթոտին եւ հոգիին մէջ:

1. Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիները կ'ընդունին Հափահաս հաւատացեալներու ընկղմմբ մկրտութիւնը եւ ամէն ազատութիւն ունին զայն կիրարկելու:

2. Կը սորվեցնեն եւ կը կիրարկեն մանկանց նուիրումը:

(Շար. կարգաւ հանդիպակաց կողքին վրայ)

Յ. Ազատ կը թողուն այն եկեղեցւոյ անդամ ծնողքները, որոնք խղճի պարտք կ'զգան մկրտեալ տալ իրենց մանուկները: Եկեղեցիները ալ պիտի սիրենք մանուկները: Եկեղեցիները, ոչ ալ նեղամտութեամբ անոնց կը հակառակին կամ անոնցմէ կը բաժնուին: Հովիւները ստիպեալ չեն իրենց համոզումին հակառակ կատարել մանկանց մկրտութիւնը, սակայն պատեհութիւն ստեղծելու են մկրտութիւն ընել տալու յարմար հովիւի մը ձեռք, վերսիշեալ ծնողաց փափաքները լեցնելով:

դ. Որոշուեցաւ որ Վեր. Ատանալեանի պատրաստելիք Հայ Աւետարանականաց Յիշատակարանին համար քարտուղարը պատրաստէ Ֆրանսահայ եկեղեցիներու պատմութիւնը:

ե. Յետ այսու, հովուական պաշտօնին ձեռնադրութեան համար պիտի պահանջուի ստացած ըլլալ որոշ աստուածաբանական կրթութիւն մը: Նաեւ ուսումնասիրութեան նիւթ պիտի ըլլան թեկնածուներու քննութեան, ձեռնադրութեան եղանակին եւ ալ պարագաները: Միութիւնս խորհեցաւ այս քայլը առնել նկատելով թէ՛ եկեղեցիներու եւ թէ՛ ալ գործիչներու բարօրութիւնը:

զ. Վալանտի հովիւ Բրօֆ. Գ. Խայիկեան եւ Սէնթ Էթիէնի հովիւ Ի. Աբրահամեան Միութեան որոշումով կոչուեցան «Արտօնեալ Քարոզիչ» ու յետ այսու իրաւասու են գործելու իբր այն և կատարելու բոլոր եկեղեցական խորհուրդները»:

Միութիւնը որոշեց (Executive Comitéի համամտութեամբ) թելադրել Մարսէյի եկեղեցիին որ Վահան եղբ. Սահակեան որպէս արտօնեալ քարոզիչ եւ Կիւլշան եղբայր Պատաքեան ու պէս աւետարանիչ սարկաւազ ձեռնադրուին իրենց եկեղեցիին մէջ. երբ որ Տօքթ. Պէոսն իրենց եկեղեցին այցելելու ըլլայ: Այս ձեռնադրութիւնը բացառիկ կարգադրութիւն մըն է, քանզի սոյն եղբայրները մինչեւ հիմա ոեւէ ձեռնադրութիւն ունեցած չեն գործին համար:

է. Մանկանց վազանձի հարցը քննել և առ այս ծրագիր մը պատրաստելու հարցք յանձնուեցաւ մասնաւոր յանձնախումբի մը (Բրօֆ. Խայիկեան, Վ. Սահակեան, Կ. Պարսումեան եւ Մ. Վէֆիլեան):

IV ԱՅԼ ԺՈՂՈՎՆԵՐ.—

Ուրիշ տարիներ աւետարանչական ժողովները տեղի կ'ունենային գիշերները, բոլոր Միութեան

թեան տեղովութեան ընթացքին: Այս տարի սակայն միայն երկու մասնաւոր ժողովներ տեղի ունեցան:

Մին՝ Դշ. գիշեր Յունիս 23, ստորագրեալին հովուական պաշտօնին ձեռնադրութեան հանդէսն էր:

Միւսը՝ Ուրբաթ 25 Յունիս, հրաժեշտի ժողով մ'էր Mr. le Pasteur եւ M^{me} Couderch որոնք A. C. O.-ի կողմէ Դամասկոս կը զրկուէին թէ՛ իբր հովիւ տեղւոյն ֆրանսական եկեղեցիին թէ՛ ալ աւետարանելու Մուհամետականները: Ներկայ էին զանազան մարմիններու ներկայացուցիչներ որոնք A. C. O.-ի կը գործակցին այս առաքելութեան մէջ: Խիստ նշանակալից էին Վեր. Berronի եւ Mr. Allegretի ճառերը:

Գալով Աւետարանչական ժողովներուն, անոնք յետաձգուեցան Միութեան յաջորդող շաբթուն: Գործակից եղբայրներուն մեծամասնութիւնը սիրայօժար աւելի մնացին եւ ժողովներ տեղի ունեցան Կիրակիէն Ուրբաթ: Բաւական բազմութիւն մը կար ամէն գիշեր: Աւետարանի պարզ քարոզութիւնը, մատուցուած աղօթքները, տրուած բազմաթիւ վկայութիւնները յաճախ ստեղծեցին տաքուկ եւ քաջալերական մթնոլորտ մը: Վստահ ենք Տէրոջմով որ Իր խօսքը պարապ ետ չպիտի դառնայ Իրեն եւ թէ՛ Ս. Հոգին պիտի շարունակէ ի կատար հանել այն բարի գործը զոր սկսաւ ոմանց մէջ:

Միութեան ժողովը առաջին անգամ ըլլալով էր որ տեղի կ'ունենար Փարիզի մէջ: Եկեղեցիին կրցածին չափ օգտուեցաւ այս առիթէն, մասնակցելով Միութեան հոգեւոր ժողովներուն, Աւետարանչական շաբաթին եւ վայելելով եղբայրներուն այցելութիւնը եւն:

Աղօթեմք որ Տէրը օրհնէ Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիները եւ օր ըստ օրէ զանոնք հասցնէ իրենց երկնային կոչումին գիտակցութեան: Տէրը զանոնք հոգեւոր խորունկ կրթութեան մը անցնելով օգտակար դարձնէ մեր սիրելի ազգին զաւակներուն ու նաեւ բոլոր այն օտարներուն, որոնց միջեւ մենք կանչուած ենք «նշան» մը ըլլալու Աստուծոյ շնորհքովը:

«Բանբեր»ի բոլոր ընտանիքին եղբայրական ողջունիւ

Քարտուղար Միութեան ժողովին
Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St. - Savournin Marseille

Le Gérant: H. N. GHAZAROSSIAN

ՅԻՍՈՒՍԻ ՍԷՐԸ

Մշակող՝

ԿՍՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՅԻՍՈՒՍԻ ՍԷՐԸ ԱՐԴՄԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵԾԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

Նուրբանուշիկ թողնի ինձ

ԿՍՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՅԻՍՈՒՍԻ ՍԷՐԸ ԱՐԴՄԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵԾԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

Նուրբանուշիկ թողնի ինձ

1. Կա՞յ սէր նման Յիսուսի սիրոյն
Որ սուրբ է անճառ անհուն,
Իր ջանքն է միայն որ Իր հօտն ժողովէ
Այս թշուառ աշխարհէ:
Ա՛հ, ի՞նչ սէր շնորհալի
Յայտնեց քեզ եւ ինձի,
Ուրեմն տես թշուառ հոգի թէ Աստուած
Կ'ազատէ սիրտդ խոցուած:

2. Կա՞յ սիրտ նման Յիսուսի սրտին
Որ բաց է միշտ ամբարշտին
Մեղքերն ներելու, զի գիտէ անոր
Խեղճ սրտին վէրք բոլոր: Կրկ.

3. Կա՞յ աչք նման Յիսուսի աչքին
Որ նայի սրտին խորքին,
Քննէ եւ ժաքրէ, ընէ Իր ծառան
Այն գահին սուրբ՝ արժան: Կրկ.

4. Կա՞յ ձայն նման Յիսուսի ձայնին,
Այնքան մեղմ եւ քաղցր-հնչիւն,
Պատրաստ է խօսիլ ծառային յոգնած,
«Քաջ լեր, ես եմ Աստուած»: Կրկ.

5. Ուրեմն եղբարք չը դատուինք Փրկչէն
Որ զընաց մեր առջեւէն,
Նայինք հաւատքի նշանաբանին,
Մինչ հասնինք հոն երկին: Կրկ.

«ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕՐԱՑՈՅՑԸ» ԱՊՍՊՐԵՑԻՔ, ԸՆԴՈՒՆԵՑԻՔ, ՅԻՇԵ-
ՑԻՔ ԹԷ ԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒՆ ՄԷՋ ԱՐԴԷՆ ՍՊԱՌԱՄ ԿՐԼԼԱՅ: